Միաժամանակ պետք է նշել, որ Բանկը, հանդիսանալով կորպորատիվ պարտատոմսերի թողարկում իրականացրած առաջին բանկերից մեկը, շարունակում է իր կողմից որդեգրած պարտատոմսերի թողարկման ավանդույթը՝ հաշվի առնելով շուկայում ձևավորված պահանջարկը և ներդրողների սպասումները:

2.2.2. Վերջնական պայմանների հրապարակման ձևը

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի կողմից, տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում հրապարակային տեղաբաշխումը սկսելուց առնվազն 3(երեք) աշխատանքային օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները Բանկը պարտավորվում է հրապարակել թողարկման օրվանից առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ առնվազն իր պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.araratbank.am:

2.3 Տեղեկատվություն առաջարկվող պարտատոմսերի վերաբերյալ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ պարտատոմսերն անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսեր են, որոնց թողարկումն իրականացվում է ՀՀ օրենսդրության համաձայն, իսկ դրանց շուրջ ծագող հնարավոր վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն նախատեսում է պարտատոմսերի թողարկման Ազդագիրը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով գրանցելուց հետո մեկ տարվա ընթացքում իրականացնել մինչև 5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ ծավալով դրամային և մինչև 30,000,000 (երեսուն միլիոն) ԱՄՆ դոլար ծավալով դոլարային պարտատոմսերի թողարկում և տեղաբաշխում:

2.3.1. Պարտատոմսերի պայմանները

Պարտատոմսերի տեսակը	անվանական արժեկտրոնային	
Պարտատոմսերի ձևը	Ոչ փաստաթղթային	
Պարտատոմսերի փոխարկելիությունը	Ոչ փոխարկելի	
Պարտատոմսերի թողարկման արժույթը	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ	25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար
Պարտատոմսերի քանակը	ենթակա է որոշման ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի կողմից, տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:	
Պարտատոմսերի թողարկման ծավալը	մինչև 5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ	մինչև 30,000,000 (երեսուն միլիոն) ԱՄՆ դոլար
Պարտատոմսերի ռեեստրը	Պարտատոմսերի ռեեստրը ենթակա է վարման «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ ՀԿԴ) կողմից	
Տեղաբաշխող	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ	
Շուկա Ստեղծող	Բանկը նախատեսում է օգտվել Շուկա ստեղծողի ծառայություններից:	
Պարտատոմսերի տեղաբաշխումը	Ուղղակի վաճառքի ձևով՝ Բանկի գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով:	
Թողարկումը	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ անվանական պարտատոմսերը թողարկվելու են Բանկի Խորհրդի 2024թ. մարտի 22-ի	

	<p>«Արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման վերջնական պայմանների, ինչպես նաև արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման ծրագրային ազդագրի հաստատման մասին» թիվ 14/Լ որոշմամբ սահմանված ընդհանուր պայմաններով և յուրաքանչյուր թողարկման դեպքում Խորհրդի առանձին որոշումներով:</p>
Պարտատոմսերի թողարկման օրը, շրջանառության ժամկետը,	<p>Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանջի թողարկման և տեղաբաշխման ժամկետները, արժույթը, ծավալը, եկամտաբերությունը և այլ էական պայմանները կսահմանվեն Բանկի Խորհրդի առանձին որոշումներով յուրաքանչյուր տրանջի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ: Թողարկման վերջնական պայմանների մասին տեղեկատվությունը կիրապարակվի տեղաբաշխումից առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.araratbank.am:</p> <p>Յուրաքանչյուր տրանջով տեղաբաշխվող պարտատոմսերի թողարկման օր է համարվելու տեղաբաշխման առաջին օրը, որից սկսած կհաշվարկվեն պարտատոմսերի դիմաց հաշվարկվող արժեկտրոնային տոկոսները:</p>
Արժեկտրոնի տոկոսադրույքը	<p>Յուրաքանչյուր տրանջի համար պարտատոմսերի արժեկտրոնների տոկոսադրույքը սահմանվելու է Բանկի Խորհրդի առանձին որոշմամբ տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ:</p>
Արժեկտրոնների վճարման պարբերականությունը	<p>Եռամսյակային (4 անգամ օրացուցային տարվա մեջ)</p>
Արժեկտրոնների հաշվարկման օրերը	<p>Ազդագրի շրջանակներում յուրաքանչյուր տրանջով տեղաբաշխվող պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային տոկոսները կհաշվարկվեն թողարկման օրվանից սկսած, ընդ որում տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար պարտատոմսերի վաճառքի գինն ըստ օրերի կիրապարակվի Բանկի ինտերնետային կայքում: Յուրաքանչյուր տրանջով տեղաբաշխվող պարտատոմսերի թողարկման օր է համարվելու տեղաբաշխման առաջին օրը, որից սկսած կհաշվարկվեն պարտատոմսերի դիմաց հաշվարկվող արժեկտրոնային տոկոսները:</p>
Օրերի հաշվարկման պայմանականությունը	<p>փաստացի/փաստացի.</p> <p>DCC=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D1M1Y1</p> <p>DSN=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D2M2Y2</p>

որտեղ՝
 D1M1Y1 - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է,
 D2M2Y2 - գործարքի կատարման ամսաթիվն է,
 D3M3Y3 - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:

Արժեկտրոնի կուտակումը

Արժեկտրոնի կուտակումը կիրականացվի հետևյալ բանաձևով՝

$$[AI = FV * \frac{C}{4} * \frac{DCS}{DCC}]$$

AI – Կուտակված տոկոս

FV – Պարտատոմսերի անվանական արժեք

C – Արժեկտրոնի տոկոսադրույք

DCC – գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում

DCS – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի փաստացի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում

Արժեկտրոնների վճարումները կկատարվեն հավասարաչափ՝ համաձայն հետևյալ բանաձևի.

$$PC = \frac{C}{4}$$

Որտեղ՝

C – Տարեկան արժեկտրոնի գումարն է

Պարտատոմսերի գինը

Պարտատոմսի գինը որոշվելու է հետևյալ բանաձևով.

$$P = \frac{C}{4} \sum_{i=1}^N \left[\frac{1}{\left(1 + \frac{y}{100*4}\right)^{i-1+\tau}} \right] + \left[\frac{FV}{\left(1 + \frac{y}{100*4}\right)^{N-1+\tau}} \right]$$

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

որտեղ՝

DSN - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի/անվանական արժեքի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած փաստացի օրերի

քանակն է՝ օրերի հաշվարկման պայմանականությունը փաստացի/փաստացի:

DCC - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի վճարման օրը եղած փաստացի օրերի քանակն է՝ օրերի հաշվարկման պայմանականությունը փաստացի/փաստացի:

P - պարտատոմսի գինն է:

N - գործարքի կատարման օրվանից հետո արժեկտրոնների մնացած վճարումների քանակն է:

Y - պարտատոմսի մինչև մարում եկամտաբերությունն է:

C - տարեկան արժեկտրոնի չափը:

i – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոփոխվում է տվյալ պահից մինչև վերջնական մարում մնացած արժեկտրոնների վճարումների քանակից կախված, ընդ որում **i** արժեքը փոփոխվում է ըստ աճման և ընդունում է 1-ից մինչև **N** արժեքները (երբ **N**-ը ընդունում է 1 արժեք, **i** –ն նույնպես ընդունում է 1 արժեք):

FV – Պարտատոմսերի անվանական արժեք:

Պարտատոմսերի եկամտաբերությունը

Պարտատոմսի տարեկան արդյունավետ տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվելու է հետևյալ կերպ՝

$$EAY=(1+C/4)^4-1,$$

որտեղ՝

1) **EAY** - տարեկան արդյունավետ տոկոսային եկամտաբերությունն է:

2) **C** - տարեկան արժեկտրոնների տոկոսադրույքն է:

Պարտատոմսերի մարման օրը

Թողարկվող և տեղաբաշխվող յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի համար Թողարկողի ինտերնետային կայքում՝ www.araratbank.am Ազդագրի հրապարակումից հետո յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխումից առաջ լրացուցիչ կիրառարակվի նաև տեղաբաշխվող պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների վճարման, ինչպես նաև պարտատոմսերի մարման ժամանակացույցը՝ հստակ ամսաթվերով:

Եթե արժեկտրոնային եկամտի կամ մարման գումարի վճարման օրը լինի ոչ աշխատանքային, ապա վճարումը կկատարվի հաջորդող աշխատանքային օրը:

Արժեկտրոնների և պարտատոմսերի մարման

ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար | ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի համար

արժույթ

արժեկտրոնների վճարումը և պարտատոմսերի մարումն իրականացվում է ՀՀ դրամով

արժեկտրոնների վճարումը և մարումն իրականացվում է ԱՄՆ դոլարով

Պարտատոմսերի մարման կատարում և/կամ արժեկտրոնների վճարում

Թողարկված յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային եկամուտները վճարվելու են եռամսյակային պարբերականությամբ: Արժեկտրոնային եկամուտների վճարման փոխանցումը Բանկի կողմից կատարվելու է արժեկտրոնի հաշվարկման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 24⁰⁰-ի դրությամբ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ից ստացված սեփականատերերի ռեեստրից քաղվածքի հիման վրա, համաձայն որի Բանկն արժեկտրոնային եկամտի վճարման օրը մինչև ժամը 14⁰⁰-ն վճարումները փոխանցում է Պարտատոմսերի սեփականատերերի բանկային հաշիվներին:

Արժեկտրոնի մարման և արժեկտրոնների վճարման ամսաթվերը (յուրաքանչյուր ժամկետի համար) նույնն են:

Թողարկված յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի մարման գումարի փոխանցումը կատարվելու է պարտատոմսերի մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 24⁰⁰-ի դրությամբ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ից ստացված սեփականատերերի ռեեստրից քաղվածքի հիման վրա, համաձայն որի Բանկը պարտատոմսերի մարման օրը մինչև ժամը 14⁰⁰-ն համապատասխան վճարումները փոխանցում է Պարտատոմսերի սեփականատերերի բանկային հաշիվներին:

Պարտատոմսի մարման և մարման կատարման (վճարման) ամսաթվերը նույնն են:

«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ից ստացված սեփականատերերի ռեեստրից քաղվածքում նշված հաճախորդի հաշվին արժեկտրոնային եկամուտների վճարման կամ մարման գումարի փոխանցման անհնարինության դեպքում այն մուտքագրվելու է համապատասխան տարանցիկ հաշիվ մինչև հաճախորդի կողմից համապատասխան հանձնարարականների ստացումը:

Պարտատոմսերի ոչ ռեզիդենտ սեփականատերերի առկայության դեպքում, Բանկը արժեկտրոնի վճարումը ՀՀ տարածքում կիրականացնի այնպես, ինչպես ռեզիդենտ սեփականատերերին, մնացած դեպքերում՝ սեփականատիրոջ հանձնարարագրով և Բանկի կողմից մատուցվող լրացուցիչ ծառայությունների համար, Բանկում

	գործող սակագներով, կփոխանցի համապատասխան հաշվին:
Պարտատոմսերի շրջանառելիության սահմանափակում	Պարտատոմսերի ցուցակման և առևտրի թույլտվություն ստանալուց հետո Բանկի պարտատոմսերը չեն կարող գնվել և վաճառվել կարգավորվող շուկայից դուրս, բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված բացառությունների:
Ցուցակումը	Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Բանկը սահմանված կարգով դիմում է Բորսա՝ պարտատոմսերի շրջանառությունը կարգավորվող շուկայում ապահովելու նպատակով: Շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթն արգելվում է վաճառել տվյալ շուկայից դուրս, բացառությամբ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերի:

2.3.2. Տեղեկություններ պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքների վերաբերյալ

Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն.

✓ Ինքնուրույն տնօրինել, տիրապետել և օգտագործել իրենց սեփականության ներքո գտնվող պարտատոմսերը:

✓ Իրականացնել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող ցանկացած գործառույթ:

✓ Թողարկման օրվանից հաշված եռամսյակային պարբերությամբ՝ համապատասխան արժեկտրոնների վճարման օրերին ստանալ արժեկտրոնային եկամուտը: Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա արժեկտրոնի վճարումն իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

✓ Պարտատոմսերի մարման օրը ստանալ պարտատոմսերի անվանական արժեքը (մարման գումարը): Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա պարտատոմսերի մարման գումարի վճարումն իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

✓ Բանկի կողմից Պարտատոմսերի մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու հիմքով դատական կարգով օգտվել պարտատիրոջ՝ օրենքով վերապահված իրավունքներից:

✓ Օրենքով սահմանված կարգով գրավադրել պարտատոմսերը:

✓ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորների միջոցով ստանալ իր արժեթղթերի հաշվից քաղվածք:

✓ Օրենքով և իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

Օրենքով և իրավական ակտերով սահմանված պարտատոմսերի սեփականատերերի իրավունքների սահմանափակումներ չկան:

Պարտատոմսերի թողարկմամբ ներգրավված միջոցները երաշխավորվում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով և նույն օրենքով սահմանված կարգով ենթակա են հատուցման 3-րդ հոդվածով սահմանված չափերով, այն է՝

ա) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասնվեց միլիոն հայկական դրամ է.

բ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը յոթ միլիոն հայկական դրամ է.

գ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը յոթ միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև տասնվեց միլիոն հայկական դրամով.

դ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է յոթ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը՝ յոթ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

Պարտատոմսերում ներդրումներ կատարող անձինք պարտավոր են նախքան պարտատոմսերի ձեռք բերումը Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում կամ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորներից որևէ մեկի մոտ ունենալ սեփականատիրոջ (անվանատիրոջ) արժեթղթերի հաշիվ, ինչպես նաև կատարել պարտատոմսերի ձեռք բերման կամ օտարման հետ կապված պարտադիր վճարները՝ սեփականության իրավունքի գրանցման կամ գործարքների ձևակերպման նպատակով:

Պարտատոմսեր ձեռք բերող անձը պարտավոր է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի հաշվի օպերատորներից որևէ մեկի մոտ, վերջինիս կողմից սահմանված կանոններին համաձայն, իր հաշվին բացել անձնական հաշիվ և դրա տվյալները ներկայացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ:

Պարտատոմսեր ձեռք բերող անձը պարտավոր է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ում կամ ցանկացած այլ բանկում իր անվամբ բացել դրամային և դոլարային բանկային հաշիվ և դրա տվյալները ներկայացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, իսկ դրամային և դոլարային բանկային հաշիվ ունենալու դեպքում՝ անհրաժեշտ է տվյալներն ուղղակի ներկայացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ:

Երկրորդային շուկայում պարտատոմսեր ձեռք բերող կամ օտարող անձը պարտավոր է իր հաշվին կատարել «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատորի և «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի կողմից սահմանված պարտադիր վճարները՝ կապված սեփականության իրավունքի գրանցման կամ գործարքների ձևակերպման հետ:

Պարտատոմսերի ցուցակման և առևտրի թույլտվություն ստանալուց հետո Բանկի պարտատոմսերը չեն կարող գնվել և վաճառվել կարգավորվող շուկայից դուրս, բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված բացառությունների՝ հետևյալ դեպքերի համար.

1. մասնավոր գործարքների համար, այն է՝ այնպիսի գործարքների, որոնց կողմերը նախապես հայտնի են, ընդ որում՝ ՀՀ ԿԲ խորհրդի 27 նոյեմբեր 2012 թվականի թիվ 331-Ն որոշման համաձայն՝ մասնավոր գործարքներ են համարվում՝

ա. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից կնքվող գործարքները,

բ. Թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքները,

գ. Արժեթղթերը հանձնելու առաջարկի շրջանակներում բաժնային արժեթղթերով կատարվող գործարքները,

2. պարտատոմսերի տեղաբաշխման շրջանակներում տեղաբաշխողների կողմից իրականացվող գործարքների համար,

3. շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերն այլ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության և վաճառելու դեպքերի համար:

Բանկի պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների գրանցումը և հաշվառումն իրականացնում է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ կողմից՝ վերջինիս հաշվի օպերատորների միջոցով:

ՀՀ օրենսդրությամբ, Թողարկողի կանոնադրությամբ և Բանկի անվանական պարտատոմսերի թողարկման մասին Բանկի խորհրդի որոշմամբ պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ սահմանափակումներ սահմանված չեն:

Թողարկողի պարտատոմսերի սեփականատերերին պարտատոմսերում կատարված ներդրումները մարվելու են պարտատոմսի անվանական արժեքով՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից տրամադրված պարտատոմսերի սեփականատերերի ցուցակում նշված հաճախորդի հաշվին:

2.3.3. Առաջարկվող պարտատոմսերի դասակարգման մասին տեղեկատվություն

Թողարկողի առաջարկվող պարտատոմսերի մարումների և Բանկի կողմից ներգրավված այլ պարտավորությունների մարումների միջև ստորադասություն չկա: Այսինքն, Բանկը չունի այնպիսի պարտավորություն, որի պարտատերերն ունեն մարման առաջնահերթություն այլ պարտատերերի, այդ թվում նաև առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի նկատմամբ: Թողարկողի սնանկության դեպքում Թողարկողի գրավով ապահովված պարտավորությունները բավարարվում են տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացումից ստացված գումարից՝ արտահերթ: Եթե պարտավորության արժեքը գերազանցում է տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացման արժեքը, ապա գրավով չապահովված պարտավորության մասը բավարարվում է այլ պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորությունների հետ համատեղ՝ համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված կարգի: Առաջարկվող պարտատոմսերի դեպքում, սեփականատերերի պահանջները՝ կբավարարվեն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետի ա) և բ) ենթակետերով սահմանված պահանջները բավարարելուց հետո 3-րդ և 4-րդ հերթին, մասնավորապես վերը նշված օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է պարտավորությունների մարման հետևյալ հերթականությունը.

ա) առաջին՝ ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված նախահաշվի շրջանակներում,

բ) երկրորդ՝ այն պարտատերերի պահանջները, որոնք բանկին վարկ, փոխառություն են տրամադրել կամ բանկում ավանդ են ներդրել կամ բանկային հաշվին դրամական միջոցներ են մուտքագրել բանկում ադմինիստրացիա նշանակվելուց հետո, բացառությամբ պարտատիրոջ և Կենտրոնական բանկի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի,

գ) երրորդ՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետության դրամով բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները՝ մինչև 16 միլիոն դրամի չափով, իսկ արտարժույթային ավանդների (հաշիվների) դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափով: Մեկ անձի՝ բանկում մեկից ավելի ավանդներ (հաշիվներ) ունենալու դեպքում նրա բոլոր ավանդները միավորվում են, և դրանց հանրագումարը համարվում է մեկ ավանդ, իսկ ապահովագրական ընկերությունների լուծարման դեպքում՝ կյանքի ապահովագրական պայմանագրերից բխող պահանջները, եթե ապահովագրական ընկերությունն իրականացնում է կյանքի ապահովագրություն, և ոչ կյանքի ապահովագրական պայմանագրերից բխող պահանջները, եթե ապահովագրական ընկերությունն իրականացնում է ոչ կյանքի ապահովագրություն,

դ) չորրորդ՝ բանկի այլ պարտավորությունները, բացառությամբ երկրորդ հերթում ընդգրկված բանկային ավանդների և բանկային հաշիվների մնացորդների,

ե1) հինգերորդ՝ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումները.

ե2) վեցերորդ՝ ստորադաս փոխառություններից բխող պահանջները.

զ) յոթերորդ՝ բանկի մասնակիցների պահանջները:

Բանկի պարտատերերի պահանջների բավարարման հերթականության «գ», «դ» և «ե.1» ենթակետերով սահմանված պարտատերերի թվից բացառություն են կազմում բանկի մասնակիցները և բանկի հետ կապված անձինք, որոնց նկատմամբ բանկի պարտավորությունները բավարարվում են «գ» ենթակետով սահմանված հերթում:

«գ» ենթակետով սահմանված անձի՝ բանկի նկատմամբ ունեցած պահանջի գումարը 16 միլիոն դրամը (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափը) գերազանցելու դեպքում, տվյալ անձի՝ մինչև 16 միլիոն դրամի չափով (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափով) պահանջը բավարարվում է «գ» ենթակետով սահմանված հերթում, իսկ այդ գումարը գերազանցող պահանջը՝ «դ» ենթակետով սահմանված հերթում:

Միևնույն հերթի պարտատերերն ունեն իրենց պահանջների բավարարման հավասար իրավունքներ:

Միևնույն հերթի պարտատերի պահանջները բավարարվում են նախորդ հերթի բոլոր պահանջները լրիվ բավարարելուց հետո:

2.3.4. Տեղաբաշխված (տեղաբաշխվող) պարտավորումներից ստացվող պարտավորումների սեփականատերերի եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը

Կարևոր ծանուցում

Չնայած այն հանգամանքի, որ Թողարկողը, իրականացնելով իր լավագույն ջանքերը և առկա գիտելիքները, սույն բաժնում ներկայացնում է արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման մոտեցումները ՀՀ-ում, այնուամենայնիվ Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ ներդրողներն այն չպետք է համարեն հարկային խորհրդատվություն և ներդրումներ անելիս հիմնվեն միայն այս բաժնում ներկայացված նյութի վրա: Թողարկողը չի երաշխավորում, որ ներդրողի կողմից Ազդագրի ստացման և ծանոթացման պահին հարկային օրենսդրությունը կհամապատասխանի ներկայացվածին, կամ համարժեքորեն կիրառություն կունենա ՀՀ հարկային մարմինների կողմից և ցանկացած պարագայում խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվության ծառայություններից: Թողարկողը ցանկանում

է հայտարարել, որ սույնով գերծ է մնում ցանկացած ներդրողի հնարավոր պահանջներից կապված հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների կիրառման և /կամ փոփոխության արդյունքում առաջացած ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից:

Պարտատոմսերից ստացված եկամուտը ենթակա է հարկման ըստ հետևյալ հարկատեսակների.

✓ **Շահութահարկ** (իրավաբանական անձանց դեպքում),

✓ **Եկամտային հարկ** (Ֆիզիկական անձանց դեպքում):

Պարտատոմսերից կարելի է եկամուտ ստանալ հետևյալ տեսքով.

1. Տոկոսային եկամուտ (պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը),

2. Կապիտալի հավելած (ձեռքբերման պահից հետո պարտատոմսի գնի աճը, հաշվարկվում է որպես մինչև մարման օրը պարտատոմսի վաճառքի և գնման գնի դրական տարբերություն):

Շահութահարկ

Շահութահարկ վճարողներ են համարվում ՀՀ գործող ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք: Հարկվող շահույթը հարկատուի՝ ՀՀ հարկային օրենսգրքի համապատասխան հոդվածներով սահմանված համախառն եկամտի և սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Այս պահին շահութահարկի դրույքը 18 տոկոս է:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց շահութահարկի դրույքաչափը պարտատոմսերում ներդրումներից ստացված եկամտի համար կազմում է 10 տոկոս: Թողարկողի պարտատոմսերում ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ ներդրողների համար Թողարկողը հանդիսանում է հարկային գործակալ:

2020թ.-ի մարտի 1-ից ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք ՀՀ-ում գործող Ֆոնդային բորսայում մինչև 2024թ.-ի դեկտեմբերի 31-ը ցուցակված պարտատոմսերից ստացվող տոկոսային եկամտի, ինչպես նաև նշյալ պարտատոմսերի օտարումից ստացվող եկամուտների մասով ազատվում են շահութահարկի վճարումից: Վերոնշյալ դրույթները տարածվում են այն արժեթղթերի (արժեթղթերի դասերի) վրա, որոնք ՀՀ գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակվել են մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ը:

Եկամտային հարկ

Եկամտային հարկ վճարողներ են համարվում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Այս պահին եկամտային հարկի դրույքաչափը 10 տոկոս է: Թողարկողի պարտատոմսերում ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ ներդրողների համար Թողարկողը հանդիսանում է հարկային գործակալ:

2020թ.-ի մարտի 1-ից ՀՀ-ում գործող Ֆոնդային բորսայում ցուցակված պարտատոմսերից ստացվող եկամուտները ազատվում են եկամտային հարկից: Բացառություն են կազմում միայն բանկերի թողարկած այն պարտատոմսերը, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է 2 տարուց: Վերոնշյալ դրույթները տարածվում են այն արժեթղթերի (արժեթղթերի դասերի) վրա, որոնք ՀՀ գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակվել են մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ը:

2.4 Առաջարկի ժամկետները և պայմանները

2.4.1. Առաջարկի պայմանները, վիճակագրությունը, ակնկալվող ժամանակացույցը և առաջարկից օգտվելու համար անհրաժեշտ գործողությունները

Բանկը՝ պարտատոմսերի թողարկման Ազդագիրը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով գրանցելուց հետո, մեկ տարվա ընթացքում թողարկելու է անվանական արժեկտրոնային պարտատոմսեր՝ մինչև 5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ և մինչև 30,000,000 (երեսուն միլիոն) ԱՄՆ դոլար թողարկման ընդհանուր ծավալով, արժեկտրոնների եռամսյակային վճարումների պարբերականությամբ, առանձին փուլերով (տրանշերով):

ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի անվանական արժեքը կազմելու է 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ, իսկ արտարժույթով թողարկվող պարտատոմսերի դեպքում՝ 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար:

Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի թողարկման և տեղաբաշխման ժամկետները, արժույթը, ծավալը, եկամտաբերությունը և այլ էական պայմանները կսահմանվեն Բանկի Խորհրդի առանձին որոշումներով յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ: Թողարկման վերջնական պայմանների մասին տեղեկատվությունը կիրապարակվի տեղաբաշխումից առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.araratbank.am:

Յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի համար տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար պարտատոմսերի վաճառքի գինն ըստ օրերի կիրապարակվի Բանկի ինտերնետային կայքում, ընդ որում յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի տեղաբաշխման ժամանակահատվածում վաճառքի ենթակա պարտատոմսերի քանակը լրանալու դեպքում Բանկը դադարեցնում է տեղաբաշխման գործընթացը: Ազդագիրը և թողարկման վերջնական պայմանները կիրապարակվեն Բանկի ինտերնետային կայքում՝ www.araratbank.am և պարտատոմսերի տեղաբաշխումը կսկսվի ոչ շուտ, քան ազդագրի հրապարակումից 3 (երեք) աշխատանքային օր հետո:

Յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ժամկետների վերաբերյալ հնարավոր փոփոխությունները կարող են կատարվել Բանկի Խորհրդի որոշմամբ:

Պարտատոմսեր գնելու նպատակով՝ Ներդրողը Բանկի գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղում ներկայացնում է Պարտատոմսերի ձեռքբերման հայտ և «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում պարտատոմսերի գրանցման և հաշվառման նպատակով՝ համապատասխան հաշվի բացման վերաբերյալ քաղվածք:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտն առնվազն պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

✓ Ներդրողի անունը և ազգանունը, անձնագրային տվյալները, բնակության վայրը, ստորագրությունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը, իրավասու (լիազորված) անձի ստորագրությունը),

✓ Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը,

✓ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ը հաշվի օպերատորի կողմից բացված անձնական հաշվի համարը:

✓ Ներդրողի դրամային և դոլարային հաշվեհամարները:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտին կից ներկայացվում են.

✓ Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի (առկայության դեպքում սոցիալական քարտի կամ հանրային ծառայության համարանիշի) պատճենները (կամ տեղեկանք սոցիալական քարտ ստանալուց հրաժարվելու մասին),

✓ իրավաբանական անձի դեպքում՝ պետ. ռեզիստրի վկայականի պատճենը (ներառյալ բոլոր ներդիրները), լիազորված անձի դեպքում՝ նաև լիազորագիրը:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտը մինչև տվյալ օրվա ժամը 15⁰⁰-ն ներկայացնելու դեպքում պարտատոմսերի դիմաց վճարվող գումարը հաշվարկվում է՝ պարտատոմսի ձեռքբերման տվյալ օրվա համար սահմանված գինը բազմապատկելով ձեռք բերվող պարտատոմսերի քանակով, ընդ որում Պարտատոմսերի ձեռքբերման հայտը համարվում է ընդունված, եթե համապատասխան հաշվում առկա է Պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարը:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտը տվյալ օրվա ժամը 15⁰⁰-ից հետո ներկայացնելու դեպքում պարտատոմսերի դիմաց վճարվող գումարը հաշվարկվում է՝ պարտատոմսի ձեռքբերման հաջորդ օրվա համար սահմանված գինը բազմապատկելով ձեռք բերվող պարտատոմսերի քանակով:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ ներկայացրած անձինք գրանցվում են հատուկ այդ նպատակով բացված գրանցամատյանում, իսկ Պարտատոմսերի ձեռքբերման հայտերը բավարարվում են ըստ ներկայացման ժամկետի հերթականության:

Տեղաբաշխման ընթացքում Բանկը չի նախատեսում պարտատոմսերի առաջարկի, ինչպես նաև տեղաբաշխման ծավալների փոփոխության կամ չեղյալ հայտարարելու հնարավորություն:

Պարտատոմսերի ձեռքբերման նվազագույն և առավելագույն մեծությունների վերաբերյալ սահմանափակումներ չկան, որի հետևանքով Պարտատոմսերի ձեռքբերման հայտերում նշվող գումարների վերաբերյալ նվազագույն կամ առավելագույն մեծությունների սահմանափակումներ չեն սահմանվում:

Պարտատոմսի նկատմամբ գնորդի սեփականության իրավունքը ծագում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում և/կամ ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված ցանկացած այլ պահառուի մոտ գնորդի անունով այդ պարտատոմսի գրանցման պահից: Պարտատոմսեր ձեռքբերողները ներկայացված հայտերը բավարարվելուց հետո արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից և/կամ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորից՝ համաձայն վերջիններիս կողմից սահմանված սակագների:

Բանկի անվանական պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման արդյունքները հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքում տեղաբաշխման ավարտի օրվանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքում Պարտատոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք չի նախատեսվում: Պարտատոմսերի ձեռքբերման հայտերը բավարարվում են ըստ ներկայացման ժամկետի հերթականության:

2.4.2. Պարտատոմսերի տեղաբաշխման ծրագիրը

Պարտատոմսերի առաջարկն ուղղված է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական ու իրավաբանական անձանց (այդ թվում որակավորված և ինստիտուցիոնալ ներդրողներին), անհատ ձեռնարկատերերին: Բանկի անվանական պարտատոմսերի առաջարկն իրականացվելու է ուղղակի վաճառքի սկզբունքով՝ Բանկի գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով:

Բանկի պարտատոմսերում ներդրողն իր կողմից ներկայացված Պարտատոմսերի ձեռքբերման հայտի բավարարման մասին տեղեկացվում է մինչև հայտի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը:

2.4.3. Առաջարկի գինը

Ազդագրի շրջանակներում յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի համար տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար պարտատոմսերի վաճառքի գինն ըստ օրերի կիրառարակվի Բանկի ինտերնետային կայքում, որը հաշվարկվելու է Ազդագրի 2-րդ բաժնում սահմանված պարտատոմսի գնի որոշման բանաձևով: Պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից մատուցվող ծառայությունների կամ խորհրդատվության դիմաց ներդրողը որևիցե ծախս չի կատարում:

«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատորի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները գանձվում են համաձայն հաշվի օպերատորի կողմից հաստատված սակագների, որոնց հետ ներդրողը կարող է ծանոթանալ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով՝ www.amx.am:

2.4.4. Տեղաբաշխումը

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է առանց մասնագիտացված կազմակերպության (անդերոայթերի) մասնակցության:

Պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարումները կարող են կատարվել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով, ինչպես նաև այլ առևտրային բանկերի միջոցով: Պարտատոմսերի գրանցման և հաշվառման նպատակով՝ համապատասխան հաշիվները բացվում են «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատորի միջոցով:

2.5 Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո կարգավորվող շուկայում պարտատոմսերը առևտրի թույլատրելու նպատակով Բանկը հինգ աշխատանքային օրվա ընթացքում դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ: Հարկ է նշել, որ որոշակի հանգամանքներում կարգավորվող շուկայում պարտատոմսերը առևտրի թույլատրման հայտը հնարավոր է չբավարարվի: Տեղաբաշխման ավարտից հետո երեք ամսվա ընթացքում կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն չստանալու դեպքում պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը համարվում է չեղյալ: Չեղյալ համարելու վերաբերյալ Բանկի Խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից 2 օրվա ընթացքում ներդրողներին վերադարձվում են պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով վճարված և մինչ որոշման ուժի մեջ մտնելու օրը ներառյալ արժեկտրոնի հաշվեգրված գումարները:

Թողարկված պարտատոմսերը առանձին տրանշներով տեղաբաշխելու դեպքում յուրաքանչյուր առանձին տրանշի տեղաբաշխման ավարտից հետո Բանկը հինգ աշխատանքային օրվա ընթացքում դիմելու է Բորսային՝ տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում առևտրի թույլատրելու համար:

Ստորև ներկայացված են Բանկի կողմից թողարկված և Բորսայում ցուցակված պարտատոմսերի տվյալները՝ 31.12.2023 թվականի դրությամբ:

Արժեթուղթ	Շրջանառության մեջ առկա ծավալ	Արժույթը	Արժեկտրոնի եկամտաբերություն	Շրջանառության ժամկետ	Մարման ամսաթիվ
AMARBKB2MER3	5,000,000	ԱՄՆ դոլար	4.75%	27 ամիս	21.07.2024

AMARBKB2NER1	3,000,000	ԱՄՆ դոլար	4.25%	27 ամիս	08.12.2024
AMARBKB2QER4	2,000,000	ԱՄՆ դոլար	5.50%	48 ամիս	18.09.2027
AMARBKB2PER6	2,000,000	ԱՄՆ դոլար	5.00%	36 ամիս	18.09.2026
AMARBKB2OER9	4,291,150	ԱՄՆ դոլար	4.50%	27 ամիս	18.12.2025

Բանկը պարտատոմսերի տեղաբաշխումն ավարտելուց հետո կնքելու է համապատասխան պայմանագիր երկրորդային շուկայում վաճառքի ակտիվացման գործառույթներ իրականացնողի հետ (շուկա ստեղծող)՝ Բանկի պարտատոմսերի շուկան ձևավորելու նպատակով: Շուկա ստեղծողը «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում իրականացնում է պարտատոմսերի առքի և վաճառքի գնանշումներ: Շուկա ստեղծողի պարտավորության հիմնական պայմանները սահմանվում են վերջինիս և Թողարկողի միջև կնքվելիք ծառայությունների մատուցման պայմանագրով և «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի «Շուկա ստեղծողի կանոններ»-ով:

2.6 Լրացուցիչ տեղեկատվություն

Սույն Բաժնում ներկայացված տեղեկատվության հավաքագրման և մշակման համար Բանկը որևիցե խորհրդատուի չի դիմել:

Սույն Բաժնում ներկայացված տեղեկատվությունը Բանկի անկախ աուդիտորի կողմից աուդիտի չի ենթարկվել:

Սույն Բաժնի 2.5 կետում ներկայացված՝ Բանկի կողմից արդեն իսկ թողարկված և «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում առևտրին թույլատրված և ազատ շրջանառվող պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրն է՝ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի պաշտոնական ինտերնետային կայքը՝ www.amx.am: Ներկայացված տեղեկատվությունը ճշգրտորեն վերարտադրվել է ազդագրում և որևէ փաստ, որը կարող էր խեղաթյուրել այդ տեղեկատվության իմաստը, բաց չի թողնվել: Սույն Բաժնում այլ անձանց կողմից այլ տեղեկատվություն չի տրամադրվել:

Բանկին և Բանկի կողմից տեղաբաշխված պարտատոմսերին վարկանիշ չի շնորհվել:

ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1 Անկախ աուդիտորները

Բանկի 2009-2011, 2013-2021 թվականների անկախ աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, իսկ 2012, 2022 և 2023 թվականներին՝ «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ն:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն հանդիսանում է «Գրանթ Թորնթոն Ինտերնեշնլի» անդամ, իսկ «Քեյ-Փի-Էմ-Ջի» Արմենիա ՓԲԸ-ն՝ «Քեյ-Փի-Էմ-Ջի Ինտերնեշնլ» կազմակերպության անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ.

հասցե՝ ՀՀ ք. Երևան 0015, Գ. Լուսավորիչ փ.9,
հեռ.՝ «Երևան Պլազա» բիզնես-կենտրոն
ինտերնետային կայք՝ <http://www.grantthornton.am>,
կազմակերպության տնօրեն-բաժնետեր՝ Արմեն Հովհաննիսյան

«Քեյ-Փի-Էմ-Ջի» Արմենիա ՓԲԸ.

հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Վ. Սարգսյան փ. 26/1,
հեռ.՝ «Էրեբունի Պլազա» բիզնես-կենտրոն,
ինտերնետային կայք՝ <http://www.kpmg.am>,
կազմակերպության տնօրեն՝ Իրինա Գևորգյան

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի՝ 2021 թվականի և «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի՝ 2022 թվականի եզրակացությունները ներկայացված են Ազդագրին կից Հավելվածներում:

Նախորդող վերջին 3 տարվա ընթացքում Բանկի աուդիտն իրականացրած անձի կողմից աշխատանքից հրաժարման դեպք չի եղել:

3.2 Ռիսկային գործոններ

Ցանկացած տնտեսավարող սուբյեկտի, այդ թվում՝ բանկերի, պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ:

Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը: Ռիսկային գործոններից յուրաքանչյուրը կարող է նշանակալից կամ էական բացասական ազդեցություն ունենալ Բանկի գործառնությունների, ֆինանսական իրավիճակի կամ արդյունքների վրա:

Ելնելով նշվածից՝ Բանկը խուսափել է Ազդագրում ներկայացված ցուցանիշների, կանխատեսումների և տեղեկատվության մեկնաբանություններից, որպեսզի ներդրողն ինքնուրույն ուսումնասիրի դրանք՝ պարտատոմսեր գնելու կամ չգնելու որոշում կայացնելու համար: Մասնավորապես կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական ռիսկերը:

Վարկային ռիսկ: Բանկի գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված գործընկերոջ վարկունակության, վարկառուի կողմից պարտավորության չկատարելու կամ մասնակի կատարելու հետ, որոնք Բանկին կարող են կորուստներ պատճառել:

Վարկային ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով բանկը կարևորում է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիան, հսկողություն սահմանում տարբեր տեսակի կենտրոնացումների վրա, վարկավորելիս որպես ապահովվածություն նախապատվություն է տալիս վարկառուի վարկունակությանը և վճարունակությանը, ինչի շնորհիվ խնդրահարույց վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում բավականին փոքր է: 31.12.2023թ. չաշխատող վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում 1.26% է կազմել:

Վարկային ռիսկը Բանկի հիմնական ռիսկերից մեկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Վարկային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ՝ վարկերի և փոխատվությունների տրամադրում, և ներդրումային գործունեության հետ՝ Բանկի ակտիվների պորտֆելի մեջ պարտքային արժեթղթերի և այլ պարտքային գործիքների ավելացում: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները:

Վարկեր տրամադրելիս Բանկը մեծ կարևորություն է տալիս վարկառուի նախկինում ունեցած վարկերի սպասարկման պատմությանը, կայուն եկամուտների առկայությանը, մասնագիտական պատրաստվածությանը, քանզի նպատակ ունենալով ձևավորել որակապես կայուն վարկային պորտֆել, վարկերը հնարավորինս բարձր իրացվելի գրավով ապահովված լինելու փաստից բացի, առաջնային նշանակություն ունի նաև վարկառուի պարտաճանաչությունը և վճարունակությունը: Վարկային պորտֆելի որակի կառավարման նպատակով սահմանված է նաև որոշում կայացնող մարմինների սահմանաչափերի հստակ համակարգ, վարկերի և վարկունակության նվազագույն պահանջների վերանայման և թեստավորման սկզբունքներ: Վարկային ռիսկի նկատմամբ իրականացված սթրես թեստերի վատագույն սցենարի համաձայն՝ 31.12.2023թ. դրությամբ վարկային ռիսկի ազդեցությունը կապիտալի համարժեքության նորմատիվի վրա չի գերազանցի 3.38 տոկոսային կետը:

Իրացվելիության ռիսկ: Իրացվելիության ռիսկը կապված է նորմալ և սթրեսային իրավիճակներում Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ոչ ամբողջական համապատասխանությունը բնական է ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների

անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը: Իրացվելիության ռիսկերի կառավարման նպատակով բանկում ներդրված է սահմանաչափերի պահպանման և ամենօրյա կտրվածքով հսկողության իրականացման մեխանիզմ: Պարբերաբար իրականացվում են իրացվելիության ճեղքվածքի և բացասական ազդեցության սցենարային վերլուծություններ:

2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ իրականացված իրացվելիության ռիսկի սթրես թեստի ժամանակ դիտարկվել է սթրես սցենար, երբ տեղի է ունենում ժամկետային ավանդների 31%-ի և ցպահանջ այլ պարտավորությունների 50%-ի միաժամանակյա արտահոսք, որի պարագայում իրացվելիության նորմատիվները՝ Ն₂¹ և Ն₂², կազմում են համապատասխանաբար 28.4% և 58.8%:

Ստորև ներկայացվում են իրացվելիության նորմատիվները 2021-2023 թվականների դրությամբ:

Նորմատիվներ	ՀՀ ԿԲ սահմանած թույլատրելի մեծություն	Փաստացի մեծություն 31.12.2023	Փաստացի մեծություն 31.12.2022	Փաստացի մեծություն 31.12.2021
Ն ₂ ¹	Նվազագույնը 15%	35.35%	39.70%	27.28%
Ն ₂ ²	Նվազագույնը 60%	80.04%	98.46%	125.42%

Բանկում ներդրված է իրացվելիության ճգնաժամային կառավարման մեխանիզմ, որը օգտագործվում է իրացվելիությանը սպառնացող անկանխատեսելի իրավիճակներում, մասնավորապես սահմանված ցուցանիշների և արտաքին գործոնների բացասական ազդակների դեպքերում:

Տոկոսադրույքի ռիսկ: Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների տոկոսադրույքների փոփոխությունների արդյունքում արժեքի փոփոխության ռիսկն է, որն էլ իր հերթին կարող է ազդել Բանկի զուտ շահույթի վրա: Շուկայական տոկոսադրույքների փոփոխությունը կարող է ազդել Բանկի ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի վրա: Նման տատանումները տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում կարող են ինչպես ավելացնել, այնպես էլ նվազեցնել տոկոսային մարժան, հանգեցնել վնասների: Բանկի ռիսկերի կառավարման սկզբունքներից ելնելով սահմանափակվում են տոկոսադրույքի հանդեպ զգայուն ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքի մեծությունը, արժեթղթերի պորտֆելի մեծությունը, կենտրոնացվածությունը և ժամկետայնությունը:

Արդյունքում, 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի՝ լրղացող տոկոսադրույքով ներգրավված ու տեղաբաշխված միջոցների վրա տոկոսադրույքների 100 բազիսային կետով անբարենպաստ փոփոխության դեպքում գոյացած հանրագումային վնասը

Բանկի ֆինանսական ցուցանիշների հիման վրա իրականացված հաշվարկների համաձայն չի գերազանցի ընդհանուր կապիտալի 0.09 %-ը, իսկ արժեթղթերի պորտֆելի վրա՝ 1.75%-ը:

Արտարժույթի ռիսկ: Արտարժույթի ռիսկն իրենից ներկայացնում է արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկը: Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից: Ելնելով ՀՀ-ում տնտեսական, քաղաքական զարգացումներից և հաշվի առնելով բանկային համակարգի զարգացման ներկա վիճակը, Բանկի զգուշավոր գործելակերպը, Բանկ-Հաճախորդ գործարար հարաբերությունների ներկայիս դրսևորումները, ինչպես նաև այն, որ ՀՀ կենտրոնական բանկը հստակ կանոնակարգել է և խիստ հսկողություն է իրականացնում բանկերի նկատմամբ, նշված ռիսկերի ի հայտ գալու հավանականությունը ձգտում է նվազագույնի:

Գիտակցելով վերը նշված ռիսկերը՝ մշտապես գնահատելով գործունեության միջավայրի փոփոխությունները և դրանցով պայմանավորված մարտահրավերները՝ Բանկը պատրաստ կլինի իրականացնել այլընտրանքային ռազմավարություններ՝ նպատակ ունենալով ապահովել ծրագրավորված ակտիվապասիվային և եկամտային ցուցանիշների կատարումը: Բանկն իրականացնում է ակտիվների ու պարտավորությունների արժույթային ճեղքվածքի կառավարման հավասարակշռված ու ցածր ռիսկային քաղաքականություն: Ռիսկերի կառավարման գործող ներքին համակարգի պայմաններում 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական ցուցանիշների հիման վրա կազմված սթրեսային սցենարի համաձայն՝ արտարժույթի փոխարժեքի 20% փոփոխության դեպքում արտարժույթային ճեղքվածքի գծով վնասները չեն գերազանցի ընդհանուր կապիտալի 8.46%-ը:

Մրցակցային ռիսկ, որն առաջանում է ՀՀ բանկային ծառայությունների շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում: ՀՀ-ում բանկային ծառայությունների շուկան խիստ մրցակցային է, շուկայում գործում են նաև արտերկրի բանկերի դուստր կառույցները, որոնք ունեն հզոր ֆինանսական կարողություններ և անկայուն իրավիճակներում ֆինանսական ներարկումներ ստանալու մեծ հնարավորություններ, բանկային առաջավոր և փորձարկված տեխնոլոգիաներ, որի շնորհիվ նրանք ունեն պոտենցիալ առավելություններ ստանալու հավակնություն: Բանկն, իր մրցակցային դիրքերն ամրապնդելու առումով, հետևողականորեն առաջնորդվում է կորպորատիվ կառավարման սկզբունքներով, իրականացնում է իր կառավարման համակարգի ինստիտուցիոնալ համակարգված բարեփոխումներ, ներդնում է բանկային ինովացիոն առաջավոր տեխնոլոգիաներ, բարձրացնում է մատուցվող սպասարկումների որակը և մատչելիությունը:

Կադրերի հոսունության ռիսկ, որն իրենից ներկայացնում է մրցունակ կադրերի աշխատանքից ազատման դեպքում Բանկի վնասներ կրելու հավանականությունը: Բարձրորակ մասնագետների առկայությունը Բանկի աշխատակազմում շատ կարևոր է մրցունակ լինելու և պլանավորված աշխատանքների արդյունավետ իրականացման համար: Նման մասնագետների նկատմամբ մեծ պահանջարկի պատճառով՝ առաջանում է նաև կադրերի հոսունության ռիսկ, որի ազդեցությունը չեզոքացնելու նպատակով՝ Բանկի ղեկավարությունը նպատակային և

հետևողական միջոցառումներ է իրականացնում աշխատողների որակավորման բարձրացման, նյութական խրախուսման և սոցիալական ապահովման խնդիրների բարելավման ուղղությամբ:

Ընդհանուր տնտեսության և քաղաքական ռիսկեր, երբ ՀՀ և գործընկեր երկրների մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կամ ՀՀ ներքաղաքական, տարածաշրջանային քաղաքական իրավիճակի անբարենպաստ զարգացումները կարող են բացասաբար ազդել Բանկի գործունեության վրա: Բոլոր տեսակի իրադարձությունները, որոնք կհանգեցնեն Բանկի վարկառուների կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարմանը, հաճախորդների կողմից Բանկի հուսալիության հանդեպ կասկածանքի կամ բացասական վերաբերմունքի, կարող են էապես ազդել Բանկի գործունեության վրա: Դա կարտահայտվի Բանկի կողմից լրացուցիչ ծախսերի կատարմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարությամբ: Բանկում ռիսկերի արդյունավետ կառավարման և նվազեցման նպատակով պարբերաբար իրականացվում է տնտեսության վիճակի հնարավոր բացասական փոփոխությունների ազդեցության տարբեր սցենարային իրավիճակների վերլուծություններ:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Բանկի գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Բանկային գործունեությունը պետական կառավարման մարմինների կողմից լիցենզավորման և կարգավորման ենթակա գործունեություն է: Բանկային գործունեության ոլորտում պետական կարգավորման նպատակը հանդիսանում է ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանությունը, որն իրականացվում է տնտեսական գործունեության նորմատիվների և բանկային ռիսկերի կառավարման համակարգերի սահմանմամբ: Դա նշանակում է, որ հնարավոր են պետական կարգավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Բանկի գործառնությունների վրա և անգամ բացասաբար ազդել ֆինանսական ցուցանիշների վրա:

3.3 Տեղեկատվություն Բանկի մասին

Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերություն:

ռուսերեն՝ АРАРАТБАНК открытое акционерное общество.

անգլերեն՝ ARARATBANK Open Joint-Stock Company.

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

ռուսերեն՝ ОАО АРАРАТБАНК

անգլերեն՝ ARARATBANK OJSC

Բանկի ապրանքային նշանն է՝

Բանկի պետական գրանցման վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87, 85 տարածք:

Բանկի գրանցման համարն է՝ 4:

Բանկի գրանցվելու վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87, 85 տարածք:

Կապի միջոցները՝

հեռ.՝ (+374 10) 59 23 23,

ֆաքս՝ (+374 10) 54 78 94,

էլ. փոստ՝ info@araratbank.am,

ինտերնետային կայք՝ www.araratbank.am:

Բանկի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

Բանկը հիմնադրվել է ՀՀ կապի նախարարության ձեռնարկությունների կողմից, որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, և 1991թ.-ի սեպտեմբերի 20-ին որպես «ՀԱՅԿԱՊ» բանկ ՍՊԸ գրանցվել է Պետական բանկում, գրանցման համար 4: Այնուհետև, Բանկը վերագրանցվել է ՀՀ ԿԲ-ում՝ 1994թ.-ի մարտի 31-ին:

Բանկն իր բնականոն գործունեությունն իրականացրել է մինչև 2000թ.-ի նոյեմբեր ամիսը: Այնուհետև 21.11.2000թ.-ին ՀՀ ԿԲ-ի կողմից Բանկում նշանակվել է նախնական խնամակալություն, 15.06.2001թ.-ին խնամակալություն, որից հետո 19.03.2002թ.-ին՝ ժամանակավոր ադմինիստրացիա, որի գործունեությունն ավարտվել է 29.10.2004թ.-ին:

Բանկի ժամանակավոր ադմինիստրացիայի 2002թ.-ի դեկտեմբերի 27-ի որոշման համաձայն Բանկը վերակազմավորվել է որպես «ՀԱՅԿԱՊ» բանկ փակ բաժնետիրական ընկերություն (գրանցվել է ՀՀ ԿԲ-ում 2003թ.-ի հունվարի 23-ին), այնուհետև անվանափոխվել՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՓԲԸ-ի, որը 2007 թվականի օգոստոսին վերակազմավորվել է որպես ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերություն:

Բանկի Բաժնետերերի Ընդհանուր ժողովի կողմից 2016 թվականի հունիսի 17-ին կայացվել է որոշում Բանկի կանոնադրական կապիտալի ավելացման վերաբերյալ, համաձայն որի լրացուցիչ թողարկվել է 482,230 (չորս հարյուր ութսուներկու հազար երկու հարյուր երեսուն) հատ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 17,590 (տասնյոթ հազար հինգ հարյուր հինսուն) ՀՀ դրամ: Տեղաբաշխման արդյունքում Բանկի կապիտալն ավելացել է մոտ 8.5 մլրդ ՀՀ դրամով: 2016 թվականի նոյեմբերի 8-ին Բանկի Բաժնետերերի Ընդհանուր ժողովը հաստատել է լրացուցիչ թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և Կանոնադրության մեջ կատարվող փոփոխությունները, որոնք 2016 թվականի նոյեմբերի 16-ին գրանցվել են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

2016 թվականի դեկտեմբերի 10-ին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Բաժնետերերի ընդհանուր ժողովը որոշում է կայացրել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը, որպես պահպանվող բանկ, «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության հետ վերակազմակերպվելու ձևով միանալու վերաբերյալ: ՀՀ Կենտրոնական Բանկը 2016 թվականի դեկտեմբերի 15-ին հաստատել և գրանցել է ընկերությունների միջև կնքված միացման պայմանագիրը, որի արդյունքում 2016 թվականի դեկտեմբերի 27-ին տեղի է ունեցել երկու

բանկերի բաժնետերերի համատեղ ընդհանուր ժողովը, որի ժամանակ հաստատվել է երկու ընկերությունների միացման փոխանցման ակտը և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, որպես պահպանվող բանկ կանոնադրության մեջ փոփոխությունների կատարումը:

2017 թվականին Բանկն ավարտեց «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության հետ ինտեգրման գործընթացը:

2022 թվականի հուլիսի 21-ի՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի որոշմամբ՝ Բանկը, կանոնադրական կապիտալի համալրման նպատակով, 2022 թվականի սեպտեմբերի 5-ին իրականացրել է 112,614 (մեկ հարյուր տասներկու հազար վեց հարյուր տասնչորս) հատ հասարակ անվանական բաժնետոմսերի լրացուցիչ տեղաբաշխում՝ յուրաքանչյուրը 24,819.4 (քսնաչորս հազար ութ հարյուր տասնինն ամբողջ չորս տասնորդական) ՀՀ դրամ արժեքով, որի արդյունքները գրանցվել են ՀՀ ԿԲ-ի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 27-ին: Արդյունքում, Բանկի կապիտալն ավելացել է մոտ 2.8 մլրդ ՀՀ դրամով:

2022 և 2023 թվականների հունիս ամիսներին Բանկի բաժնետերերի Տարեկան Ընդհանուր Ժողովի որոշմամբ Բանկի ֆինանսական հաշվետվություններում արտացոլված կուտակված շահույթից համապատասխանաբար 3 մլրդ և 5 մլրդ ՀՀ դրամն ուղղվել է Բանկի բաժնետերերին՝ շահութաբաժինների վճարմանը:

Բանկն իր հեռանկարային զարգացումը նախանշելիս առաջնորդվում է, «Կանխատեսել՝ նշանակում է կառավարել» գաղափարախոսությամբ՝ փորձելով հնարավորինս ճշգրիտ և համակողմանի կանխատեսել սպասվող հնարավոր զարգացումները՝ նպատակ ունենալով բարձրացնել կառավարման մարմինների կողմից կայացվող որոշումների արդյունավետությունը և հասցեականությունը:

Բանկի առաքելությունն է՝ ապահովել Բանկի կայուն շարունակական զարգացումը, նպաստել երկրի տնտեսության զարգացմանը և կրել սոցիալական պատասխանատվություն հասարակության առջև՝ արժեքներ ստեղծելով Բաժնետերերի, Հաճախորդների և Աշխատողների համար:

Բանկի արժեքականն է՝ լինել կայուն զարգացող միջազգային, լայն և արդյունավետ մասնաճյուղային ցանց ունեցող հանրային բանկ, օգտագործելով լավագույն միջազգային և նորագույն տեխնոլոգիաները, ունենալ առաջատար դիրքեր՝ ՓՄՁ վարկավորման, մանրածախ գործառնությունների, առևտրի ֆինանսավորման և ֆինանսական շուկայում իրականացվող գործառնությունների ուղղություններով:

Բանկի նպատակն է՝ ապահովել կայուն զարգացում, արդարացնելով Բանկի բոլոր շահառուների սպասումները: Նշված նպատակն իրականացնելու համար Բանկը որդեգրել է մասնաճյուղերի ցանցի օպտիմալացման, ինչպես նաև նոր տեխնոլոգիաներով բանկային ծառայություններից օգտվելու հնարավորության ներդրման քաղաքականություն:

Բանկի՝ առաջիկա երեք տարիների հիմնական և երկարաժամկետ նպատակն է՝ ՀՀ բանկային շուկայում զբաղեցնել տեղ առաջատար հնգյակում՝ մի շարք բացարձակ և հարաբերական ցուցանիշներով, մասնավորապես, ակտիվների, հաճախորդներին տրված վարկերի ծավալներով, հաճախորդների քանակով և շահութաբերությունը բնութագրող ցուցանիշներով: Բանկն իր նախանշված նպատակներին հասնելու համար որդեգրել է

համակարգային մոտեցում՝ որպես զարգացման հեռանկարային ուղղություններ առանձնացնելով հետևյալ երեք ուղղությունները՝

- ✓ ավանդական բանկային ծառայություններ (Classic Commercial Banking),
- ✓ ներդրումային բանկային ծառայություններ (Investment Banking),
- ✓ թվային բանկային ծառայություններ (Digital Banking):

2017թ. ընթացքում տեղի է ունեցել փոփոխություն Բանկի բաժնետերերի կազմում, մասնավորապես՝ Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը վաճառել է Բանկի բաժնետոմսերում իր ունեցած բաժնեմասը և այլևս բաժնետեր չի հանդիսանում:

2019թ.-ի հունիսի 25-ին տեղի ունեցավ Բանկի կանոնադրական կապիտալում բաժնետերերի բաժնեմասնակցության չափի փոփոխություն. Բանկի բաժնետեր Ռուռալ Իմպուլս Հիմնադրամ II Էս Էյ, Սիկավ-ՍիՖ ԲԸ-ն վաճառել է, իսկ Բանկի բաժնետեր՝ Բարսեղ Բեգլարյանը ձեռք է բերել 75,531 հատ բաժնետոմս, որի արդյունքում Բարսեղ Բեգլարյանի բաժնեմասնակցության չափը Բանկի կանոնադրական կապիտալում դարձել է 22.626284%, իսկ Ռուռալ Իմպուլս Հիմնադրամ II Էս Էյ, Սիկավ-ՍիՖ ԲԸ-ինը՝ 4.289809%:

2020թ. ընթացքում տեղի է ունեցել փոփոխություն Բանկի բաժնետերերի կազմում, մասնավորապես՝ Ռուռալ Իմպուլս Հիմնադրամ II Էս Էյ, Սիկավ-ՍիՖ ԲԸ-ն վաճառել է Բանկի բաժնետոմսերում իր ունեցած բաժնեմասը և այլևս բաժնետեր չի հանդիսանում:

Դուրսգրված ֆինանսական ակտիվների գծով կարող են դեռևս կիրառվել հարկադիր միջոցներ՝ վճարման ենթակա գումարների փոխհատուցման Բանկի ընթացակարգերի հետ համապատասխանություն ապահովելու համար:

Ֆինանսական ակտիվի անբաժանելի մաս չհանդիսացող ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բանկը գնահատում է, արդյոք ֆինանսական երաշխավորության պայմանագիրը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, որը հաշվառվում է որպես այդ գործիքի բաղադրիչ, թե առանձին հաշվառվող պայմանագիր: Այս գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է հետևյալ գործոնները.

- արդյոք երաշխավորությունը նախատեսված է պարտքային գործիքի պայմանագրի պայմաններով,
- արդյոք երաշխավորությունը պահանջվում է պարտքային գործիքի պայմանագիրը կարգավորող օրենքներով և կանոնակարգերով,
- արդյոք երաշխավորության պայմանագիրը կնքվել է պարտքային գործիքի պայմանագրի հետ նույն ժամանակ և հաշվի առնելով վերջինիս պայմանները և
- արդյոք երաշխավորությունը տրամադրվել է փոխառուի մայր կազմակերպության կամ փոխառուի խմբի անդամ հանդիսացող որևէ այլ կազմակերպության կողմից:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման հետ կապված վճարվելիք ցանկացած հավելավճար հաշվառվում է որպես այդ ակտիվի ձեռքբերման գործարքի գծով ծախսում: Պարտքային գործիքի իրական արժեքը և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Բանկը հաշվի է առնում երաշխավորությամբ ապահովվող պաշտպանության ազդեցությունը:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը չի հանդիսանում պարտքային գործիքի անբաժանելի տարր, ապա այն ճանաչում է ակտիվ, որն իրենից ներկայացնում է երաշխավորության հավելավճարի գծով կանխավճար, և պարտքային կորուստների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք: Կանխավճարի տեսքով վճարված հավելավճարի գծով ակտիվը ճանաչվում է միայն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը, որի համար ստացվել է երաշխավորությունը, ոչ պարտքային առումով արժեզրկված է և ոչ էլ ենթարկվել է պարտքային ռիսկի նշանակալի աճի երաշխավորությունը ստանալու պահին: Այս ակտիվները ճանաչվում են «այլ ակտիվներ» հոդվածի կազմում: Բանկը փոխհատուցման իրավունքի գծով օգուտները կամ կորուստները ներկայացնում է շահույթում կամ վնասում՝ «արժեզրկումից կորուստներ ֆինանսական գործիքների գծով» հոդվածում:

(զ) Հաճախորդներին տրված վարկեր

Հաճախորդներին տրված վարկերի սկզբնական չափումն իրականացվում է ռական արժեքով՝ գումարած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(է) Ավանդներ, թողարկված պարտքային արժեթղթեր և ստորադաս պարտավորություններ

Ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը և ստորադաս պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ հանած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը պարտավորությունները նախորոշում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

(ը) Ֆինանսական երաշխավորություններ և փոխատվության հանձնառություններ

Ֆինանսական երաշխավորության պայմանագրով Բանկից պահանջվում է կատարել սահմանված վճարումներ՝ փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի դերիտորի կողմից պարտքային գործիքի պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով: Փոխատվության հանձնառություններն իրենցից ներկայացնում են նախապես սահմանված պայմաններով վարկ տրամադրելու կայուն հանձնառություններ:

Ֆինանսական երաշխավորությունները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելու հանձնառությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում դրանք չափվում են հետևյալ նշվածներից ավելի բարձրով՝ ՖՀՄՄ 9-ի համաձայն որոշված կորստի պահուստից (տես Ծանոթագրություն 4 (ե) (iv)) և սկզբնապես ճանաչված գումարից՝ հանած, երբ տեղին է, ՖՀՄՄ 15-ի սկզբունքներին համապատասխան ճանաչված եկամտի կուտակային գումարը:

Բանկը չունի իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող փոխատվության հանձնառություններ:

Այլ փոխատվության հանձնառությունների համար Բանկը ճանաչում է կորստի պահուստ (տես Ծանոթագրություն 4 (ե) (iv)) ՖՀՄՄ 9-ի համաձայն:

Ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով առաջացող պարտավորությունները ներառվում են այլ պարտավորությունների կազմում:

(թ) Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը ներառվում է ռեպո գործարքների գծով կրեդիտորական պարտքերի կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Հետադարձ վաճառքի պայմանագրերով («հակադարձ ռեպո») ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դերիտորական պարտքեր: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հետադարձ վաճառքի պայմանագրով ձեռք բերված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

(ժ) Հիմնական միջոցներ

(i) Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետներ ունեցող նշանակալի մասերից, այդ մասերը հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

(ii) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով առանձին ակտիվների օգտակար ծառայության ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռքբերման ամսաթվից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

- շենքեր 20-30 տարի
- համակարգիչներ և կապի սարքավորումներ 3-ից 8 տարի
- փոխադրամիջոցներ 5-ից 8 տարի
- այլ հիմնական միջոցներ 5-ից 8 տարի

Վարձակալված գույքի բարելավումները կապիտալացվում և ամորտիզացվում են վարձակալության ժամկետից և օգտակար ծառայության ժամկետից նվազագույնի ընթացքում՝ գծային մեթոդով:

(բ) Ոչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման և ներդրման ծախսումները կապիտալացվում են համապատասխան ոչ նյութական արժեքի ինքնարժեքին: Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետները կազմում են 3-ից 10 տարի:

(ը) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Բանկն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող ապագա դրամական հոսքերը զեղչման մինչև հարկումը դրույքով, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը հատուկ ռիսկերը:

(ի) Բաժնետիրական կապիտալ

(i) Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները, ներառյալ հարկերը, ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում:

(ii) Էմիսիոն եկամուտ

Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքից ավել վճարվող գումարը ճանաչվում է որպես Էմիսիոն եկամուտ:

(iii) Ճահաբաժիններ

Ճահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակաշրջանում, երբ հայտարարվում են:

(ծ) Առգրավված գրավ

Առգրավված գույքը հաշվառվում է սկզբնական արժեքից և գուտ իրացման արժեքից նվազագույնով:

(կ) Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկված լինելու հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը գեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով գեղչման մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին հատուկ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլինի:

(հ) Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ

Բանկը ներկայացնում է մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային և նոսրացված շահույթի վերաբերյալ տվյալներ իր սովորական բաժնետոմսերի համար: Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը հաշվարկվում է Բանկի սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող շահույթը կամ վնասը բաժանելով այդ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թվին՝ ճշգրտված Բանկին պատկանող իր սեփական բաժնետոմսերի թվով: Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթը որոշվում է ճշգրտելով Բանկի սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող շահույթը կամ վնասը և շրջանառության մեջ գտնվող բաժնետոմսերի կշռված միջին թիվը՝ ճշգրտված Բանկին պատկանող իր սեփական բաժնետոմսերի թվով՝ բոլոր նոսրացնող պոտենցիալ սովորական բաժնետոմսերի ազդեցությունը հաշվի առնելու համար, որոնք իրենցից ներկայացնում են աշխատակիցներին տրամադրված փոխարկելի պարտատոմսերը և բաժնետոմսերի օպցիոնները:

(ձ) Սեզմենաային հաշվետվություններ

Գործառնական սեզմենտը Բանկի բաղադրիչ է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր (ներառյալ Բանկի այլ բաղադրիչների հետ գործառնություններից հասույթները և ծախսերը), որի գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից՝ սեզմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով, և որի գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նշված ամսաթվին ավարտված տարվա ընթացքում Բանկի սեզմենտային հաշվետվությունները հիմնված էին հետևյալ գործառնական սեզմենտների վրա՝ մանրածախ, կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեություն: 2022թ-ին գլխավոր գործառնական որոշում կայացնողը փոխեց ռեսուրսների բաշխման նկատմամբ կիրառվող իր մոտեցումը և չի վերահսկում սեզմենտի հասույթը կամ շահույթն ըստ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ որոշված սեզմենտների: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նշված ամսաթվին ավարտված տարվա ընթացքում ղեկավարությունը գտնում է, որ Բանկը բաղկացած է մեկ գործառնական սեզմենտից:

(ղ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հողվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ գործարքներին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել տարվա հարկվող եկամտի գծով՝ կիրառելով այն դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումներ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ, որն ազդեցություն չունի ոչ հաշվապահական և ոչ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Բանկն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթը որոշվում է հարկվող ժամանակավոր տարբերությունների մարումից առաջացող գումարի հիման վրա: Եթե հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ ճանաչելու համար, դիտարկվում է գոյություն ունեցող ժամանակավոր տարբերությունների մարումներով ճշգրտված ապագա հարկվող շահույթը, որը որոշվում է Բանկի գործարար ծրագրերի հիման վրա: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի: Այս նվազեցումները վերականգնվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթ ստանալու հավանականությունը:

Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերագնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում են այն չափով, որով հավանական է, որ Բանկն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող է դրանք օգտագործվել:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույթները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Բանկը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

(Ճ) Վարձակալություն

Պայմանագրի սկզբում Բանկը որոշում է, թե արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը:

(i) Բանկը՝ որպես վարձակալ

Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի սկզբում կամ փոփոխության դեպքում, Բանկը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչի վրա՝ հիմք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գինը:

Բանկը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը ներառում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական գումարը՝ ճշգրտված վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարների մասով, գումարած կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները և հիմքում ընկած ակտիվի ապատեղակայման և քանդման, կամ վերջինիս վերականգնման, կամ դրա զբաղեցրած տեղանքի վերականգնման գնահատված ծախսումները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները:

Հետագայում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով՝ վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև ժամկետի ավարտը, եթե վարձակալությամբ Բանկին չեն փոխանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին, կամ եթե ակտիվի օգտագործման իրավունքի արժեքը չի արտացոլում, որ Բանկը կիրառորձի գնման օպցիոնը: Այդ դեպքում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ընթացքում, որը որոշվում է նույն հիմունքով, որը կիրառվում է հիմնական միջոցների համար: Բացի այդ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվը պարբերաբար նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով, վերջիններիս առկայության դեպքում, և ճշգրտվում է վարձակալության գծով պարտավորության որոշ վերաչափումների մասով:

Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք չեն վճարվել մեկնարկի ամսաթվին՝ գեղջված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, կամ Բանկի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով, եթե այդ դրույքը չի կարելի հեշտությամբ որոշել: Որպես կանոն, Բանկը որպես գեղջման դրույք կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Բանկը որոշում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, հիմք ընդունելով տարբեր արտաքին ֆինանսական աղբյուրներից ստացված տոկոսադրույքները, և կատարում է որոշ ճշգրտումներ արտացոլելու համար վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվում են հետևյալ վարձավճարները.

- հաստատուն վճարումները, ներառյալ ըստ էության հաստատուն վճարումները,
- վարձակալության փոփոխուն վճարումները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը,
- գումարները, որոնք, ինչպես ակնկալվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և
- գնման օպցիոնի իրագործման գինը, եթե Բանկը խելամտորեն համոզված է, որ կիրառորձի այդ օպցիոնը, վարձավճարներն օպցիոնով նախատեսված նորացման ժամանակաշրջանի համար, եթե Բանկը խելամտորեն համոզված է, որ կիրառորձի այդ երկարաձգման օպցիոնը, ինչպես նաև վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքները, եթե Բանկը խելամտորեն համոզված է, որ վաղաժամ չի դադարեցնի վարձակալությունը:

Վարձակալության գծով պարտավորությունը չափվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն վերաչափվում է, եթե առկա է ապագա վարձավճարների փոփոխություն՝ որպես ինդեքսի կամ դրույքի փոփոխության արդյունք, առկա է մնացորդային արժեքի երաշխիքի շրջանակներում վճարման ենթակա գումարների Բանկի գնահատականի փոփոխություն, եթե Բանկը փոխում է գնման, երկարաձգման կամ դադարեցման օպցիոնն իրագործելու իր գնահատականը, կամ եթե առկա է վերանայված ըստ էության հաստատուն վարձավճար:

Եթե վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է այս եղանակով, կատարվում է համապատասխան ճշգրտում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքի գծով, կամ գրանցվում է շահույթում կամ վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև գրո:

Բանկը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ փոքրարժեք ակտիվների և կարճաժամկետ վարձակալությունների համար: Այս վարձակալությունների գծով վարձավճարները Բանկը ճանաչում է որպես ծախս գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

(ii) Բանկը՝ որպես վարձատու

Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի սկզբում կամ փոփոխության դեպքում, Բանկը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչի վրա՝ հիմք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գինը: Երբ Բանկը հանդես է գալիս որպես վարձատու, այն վարձակալության սկզբում որոշում է, թե արդյոք վարձակալությունը հանդիսանում է ֆինանսական կամ գործառնական վարձակալություն:

Վարձակալությունը դասակարգելու համար Բանկը գնահատում է, արդյոք վարձակալությամբ փոխանցվում են հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, որի դեպքում վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական, իսկ հակառակ դեպքում՝ որպես գործառնական վարձակալություն: Այս գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է որոշ ցուցանիշներ, մասնավորապես, արդյոք վարձակալության ժամկետի մեջ է ներառվում ակտիվի տնտեսական ծառայության մեծ մասը:

Եթե պայմանագիրը պարունակում է վարձակալության և ոչ վարձակալության բաղադրիչներ, Բանկը կիրառում է ՖՀՄՄ 15-ը պայմանագրում սահմանված հատուցումը վերագրելու համար:

Գործառնական վարձակալության գծով ստացված վարձավճարները Բանկը ճանաչում է որպես եկամուտ գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում՝ «այլ հասույթի» կազմում:

(մ) Գեռևա չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ գործում են 2022թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Բանկը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

(i) Այլ ստանդարտներ

Ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Մեկ գործարքից առաջացած ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՄ 12 փոփոխություններ). Փոփոխությունն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չի ունենա, քանի որ ֆինանսական հաշվետվություններում Բանկը հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները բացահայտել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներից և վարձակալության գծով պարտավորություններից առանձին (Ծանոթագրություն 12):
- ՖՀՄՄ 17 «Ապահովագրության պայմանագրեր» և ՖՀՄՄ 17 «Ապահովագրության պայմանագրեր» փոփոխություններ. Բանկն իրականացրել է կատարողական երաշխիքների իր պորտֆելի վերլուծություն և եզրահանգել է, որ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա կատարողական երաշխիքներն իրենցից ապահովագրության պայմանագրեր չեն ներկայացնում՝ ՖՀՄՄ 17-ի «Ապահովագրության պայմանագրեր» պահանջների համաձայն:
- Հաշվապահական հաշվառման բաղաբաղականության բացահայտում (ՀՀՄՄ 1-ի և ՖՀՄՄ վերաբերյալ գործառնական առաջարկներ 2-ի փոփոխություններ),
- Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՄ 8-ի փոփոխություններ):

5 Միավների ուղղում

2022թ. ընթացքում Բանկը գնահատել է, որ նախորդ ժամանակաշրջաններում կիրառել է հաճախորդներին տրված վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկման, հաճախորդներին տրված վարկերի փուլերի միջև բաշխման և հաճախորդներին տրված վարկերի դուրսգրման քաղաքականություններ, որոնցում եղել են անհամապատասխանություններ ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ: Արդյունքում հաճախորդներին տրված վարկերի մնացորդը պակաս է ներկայացվել, իսկ արժեզրկումից կորուստները և համապատասխան հետաձգված հարկային ակտիվն ավել են ներկայացվել: Միավներն ուղղվել են՝ վերահաշվարկելով նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների յուրաքանչյուր ազդեցություն կրած տողային հոդվածը: Ստորև բերվող աղյուսակներում ամփոփ կերպով ներկայացված սխալների ուղղման ազդեցությունը Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա

(i) Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

հազ. դրամ	Միավների ուղղման ազդեցությունը		
	Ըստ նախորդ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների	Ճշգրտումներ	Վերահաշվարկված
1 հունվարի 2021թ.			
Ընդամենը ակտիվներ	248,881,437	625,670	249,507,107
Հաճախորդներին տրված վարկեր	148,222,057	763,012	148,985,069
Հետաձգված հարկային ակտիվ	226,276	(137,342)	88,934
Ընդամենը սեփական կապիտալ	38,226,564	625,670	38,852,234

հազ. դրամ	Միավների ուղղման ազդեցությունը		
	Ըստ նախորդ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների	Ճշգրտումներ	Վերահաշվարկված
31 դեկտեմբերի 2021թ.			
Ընդամենը ակտիվներ	268,064,748	2,842,644	270,907,392
Հաճախորդներին տրված վարկեր	147,786,661	3,466,639	151,253,300
Հետաձգված հարկային ակտիվ	816,184	(623,995)	192,189
Ընդամենը սեփական կապիտալ	37,778,624	2,842,644	40,621,268

(ii) Ծահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

հազ. դրամ	Միավների ուղղման ազդեցությունը		
	Ըստ նախորդ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների	Ճշգրտումներ	Վերահաշվարկված
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար			
Չուտ կորուստներ արժեզրկումից ֆինանսական գործիքների գծով	(2,685,988)	2,703,627	17,639
Շահույթահարկ	63,539	(486,653)	(423,114)
Շահույթ	45,742	2,216,974	2,262,716
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	(447,940)	2,216,974	1,769,034

Միավների ուղղումն ազդեցություն չի ունեցել 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա գործառնական, ներդրումային և ֆինանսավորման գործունեությունից ստացված ընդհանուր դրամական հոսքեր վրա: Վերը նշված փոփոխությունների արդյունքում 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային և նոսրացված շահույթը 0.03 հազար դրամից անել էր մինչև 1.29 հազար դրամ:

6 Չուտ տոկոսային եկամուտ

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ		
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Հաճախորդներին տրված վարկեր	18,009,072	15,072,281
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	817,870	997,113
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	540,037	159,320
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	516,288	511,280
Այլ	78,442	1,294
	19,961,709	16,741,288
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ		
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	3,337,842	2,260,208
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ	23,299,551	19,001,496
Այլ տոկոսային եկամուտ		
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	2,118	6,274
Ընդամենը տոկոսային եկամուտ	23,301,669	19,007,770
Տոկոսային ծախս		
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	5,694,669	4,050,875
Այլ փոխառու միջոցներ և ստորադաս փոխառություններ	3,903,124	4,357,824
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	1,097,848	1,085,059
Թողարկված պարտքային արժեթղթեր	357,069	790,271
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	308,164	64,944
Վարձակալության գծով պարտավորություններ	296,574	298,553
	11,657,448	10,647,526
Չուտ տոկոսային եկամուտ	11,644,221	8,360,244

7 Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով գույտ ծախս

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ		
Կանխիկացում և հաշիվների սպասարկում	1,809,739	474,692
Պլաստիկ քարտերի սպասարկում	1,474,458	907,415
Դրամական փոխանցումներ	760,084	577,756
Այլ	328,893	253,793
	4,373,174	2,213,656
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս		
Վճարային քարտերով գործառնություններ	987,212	847,935
Վճարային համակարգի ծառայություններ	574,034	136,555
Երաշխավորություններ	48,543	70,411
Ֆոնդային բորսայի ծառայություններ	41,945	36,029
	1,651,734	1,090,930
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով գույտ ծախս	2,721,440	1,122,726

8 Չուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Օգուտ սփռված գործարքներից	9,414,047	1,559,619
Վնաս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	(494,270)	(10,068)
	8,919,777	1,549,551

9 Այլ գործառնական եկամուտ և ծախս

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Այլ գործառնական եկամուտ		
Ստացված տույժեր և տուգանքներ	512,191	333,394
Չուտ օգուտ հիմնական միջոցների օտարումից	403,563	355,585
Չուտ օգուտ այլ ակտիվների վաճառքից	153,677	54,373
Այլ գործառնական եկամուտ	241,763	171,412
	1,311,194	914,764
Այլ գործառնական ծախս		
Վճարումներ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին	(261,388)	(160,012)
Վճարումներ ֆինանսական համակարգի հաշտարարին	(27,265)	(25,245)
Այլ գործառնական վնասներ*	-	(1,559,651)
Այլ գործառնական ծախսեր	(436,468)	(186,683)
	(725,121)	(1,931,591)

* 2021թ. այլ գործառնական վնասներն իրենցից ներկայացնում են կանխիկ դրամի կորուստները բանկոմատների հետ կապված խարդախությունների հետևանքով:

10 Չուտ օգուտ արժեզրկումից ֆինանսական գործիքների գծով

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում գրանցված ֆինանսական գործիքների գծով արժեզրկումից կորուստները:

հազ. դրամ	2022թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(11,853)	-	-	(11,853)
Ամորտիզացված արժեքով չափվող բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	41,653	-	-	41,653
Իրավաբանական անձանց տրված վարկեր*	24,625	569,348	434,766	1,028,739
Ֆիզիկական անձանց տրված վարկեր*	(161,516)	250,848	(1,030,791)	(941,459)
Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ	(4,562)	-	-	(4,562)
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր	(100,240)	-	-	(100,240)
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր	81,210	-	-	81,210
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր	(11,556)	-	-	(11,556)
Ընդամենը	(142,239)	820,196	(596,025)	81,932

* Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի արժեզրկումից զուտ օգուտների/(կորուստների) կազմում ներառված են վերականգնումներն ուղղակի կանխիկ վճարումների միջոցով համապատասխանաբար 196,257 հազար դրամի և 625,210 հազար դրամի չափով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում գրանցված ֆինանսական գործիքների գծով արժեզրկումից կորուստները:

հազ. դրամ	2021թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(9,546)	-	-	(9,546)
Ամորտիզացված արժեքով չափվող բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	(4,970)	-	-	(4,970)
Իրավաբանական անձանց տրված վարկեր (վերահաշվարկված)	180,088	686,109	297,744	1,163,941
Ֆիզիկական անձանց տրված վարկեր (վերահաշվարկված)	123,426	(52,865)	(1,257,562)	(1,187,001)
Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ	(925)	-	-	(925)
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր	1,847	-	-	1,847
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր	30,754	-	-	30,754
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր	23,540	-	-	23,540
Ընդամենը	344,214	633,244	(958,818)	17,640

11 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Մաշվածություն և ամորտիզացիա	1,186,248	1,478,499
Գուղվիլի արժեզրկում	362,602	-
Վերանորոգման և սպասարկման ծախսեր	322,645	290,604
Անվտանգության ծառայություն	270,024	289,809
Զփոխհատուցվող հարկեր և տուրքեր	238,609	226,627
Գովազդ և շուկայավարում	234,759	138,374
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	203,591	182,047
Կապի և տեղեկատվական ծառայություններ	191,589	116,706
Ապահովագրություն	129,547	92,452
Մասնագիտական ծառայություններ	79,335	45,422
Վարձակալության գծով այլ ծախսեր	60,023	68,086
Ներկայացուցչական և կազմակերպչական ծախսեր	15,775	4,375
Այլ	289,764	239,754
	3,584,511	3,172,755

12 Ծահութահարկի գծով ծախս

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
		Վերահաշվարկված
Ընթացիկ հարկի գծով ծախս	2,873,705	418,000
Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների փոփոխություններ՝ ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման հետևանքով	117,274	5,114
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	2,990,979	423,114

2022թ-ին ընթացիկ հարկի կիրառելի դրույքաչափը կազմում է 18% (2021թ-ին՝ 18%):

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրում դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2022թ. հազ. դրամ	%	2021թ. հազ. դրամ	%
				Վերահաշվարկված
Ծահույթ մինչև շահութահարկով հարկումը (վերահաշվարկված)	16,162,518		2,685,830	
Ծահույթահարկ՝ հաշվարկված հարկի կիրառելի դրույքաչափով	(2,909,253)	(18.0)	(483,449)	(18.0)
(Զնվագեցվող ծախսեր)/չհարկվող եկամուտ	(81,726)	(0.5)	60,335	2.3
	(2,990,979)	(18.5)	(423,114)	(15.8)

(ա) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվություններում արտացոլելու նպատակով որոշված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային ակտիվներ 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ստորև ներկայացված են ժամանակավոր տարբերությունների փոփոխությունները 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում:

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2022թ. Վերահաշվարկված	Ծախսված կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,746	2,112	-	4,858
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	75,402	43,137	243,360	361,899
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	4,563	(65,363)	-	(60,800)
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	7,785	11,652	-	19,437
Հանախորդներին տրված վարկեր	(495,754)	(29,920)	-	(525,674)
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	19,595	(19,595)	-	-
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	(525,121)	(36,736)	-	(561,857)
Այլ ակտիվներ	(5,388)	(3,028)	-	(8,416)
Վարձակալության գծով պարտավորություններ	635,595	(51,749)	-	583,846
Հանախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	11,390	(11,382)	-	8
Այլ պարտավորություններ	461,376	43,598	-	504,974
	192,189	(117,274)	243,360	318,275

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.
	Վերահաշ- վարկված	Վերահաշ- վարկված		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,027	1,719	-	2,746
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	(32,635)	(332)	108,369	75,402
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	6,528	(1,965)	-	4,563
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	5,247	2,538	-	7,785
Հաճախորդներին տրված վարկեր	(66,062)	(429,692)	-	(495,754)
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	19,595	-	-	19,595
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	131,496	(656,617)	-	(525,121)
Այլ ակտիվներ	(26,837)	21,449	-	(5,388)
Վարձակալության գծով պարտավորություններ	(102,840)	738,435	-	635,595
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	11,390	-	-	11,390
Այլ պարտավորություններ	142,025	319,351	-	461,376
	88,934	(5,114)	108,369	192,189

Գործող հարկային օրենսդրության համաձայն՝ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարման ժամկետ չունեն: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվել են այնքանով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց Բանկը կկարողանա օգտագործել դրանցից ստացված օգուտները:

13 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Կանխիկը դրամարկղում	18,575,027	9,811,558
Նոստրո հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	59,643,637	29,310,042
Նոստրո հաշիվներ այլ բանկերում		
- Aa1-ից Aa3 վարկանիշով	68,330	135,682
- A1-ից A3 վարկանիշով	5,283,920	3,087,227
- Baa1-ից Baa3 վարկանիշով	-	442,829
- Ba1-ից Ba3 վարկանիշով	319,988	457,284
- B1-ից B3 վարկանիշով	1,311,559	-
- վարկանիշ չունեցող	321,320	186,363
Ընդամենը նոստրո հաշիվներ այլ բանկերում	7,305,117	4,309,385
Ընդամենը համախառն դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	85,523,781	43,430,985
Պարտքային կորստի գծով պահուստ	(27,107)	(15,254)
Ընդամենը զուտ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	85,496,674	43,415,731

Պարտքային որակը բացահայտելու համար Բանկն օգտագործում «Moody's» վարկանիշային գործակալության վարկանիշները: Եթե պայմանագրային կողմերը չունեն «Moody's» վարկանիշային գործակալության վարկանիշներ, սակայն ունեն «Standard & Poor's» և/կամ «Fitch» վարկանիշային գործակալությունների կողմից շնորհված վարկանիշներ, վարկանիշները փոխարկվում են «Moody's» վարկանիշային գործակալության համարժեք վարկանիշների:

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ և չափվում են ամորտիզացված արժեքով 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի բանկերում տեղաբաշխված միջոցներ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի, որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը (2021թ-ին նման բանկեր չկային, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի):

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

հազ. դրամ	2022թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Մնացորդը առ 1 հունվարի	(15,254)	-	-	(15,254)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	15,254	-	-	15,254
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(27,107)	-	-	(27,107)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	(27,107)	-	-	(27,107)

հազ. դրամ	2021թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Մնացորդը առ 1 հունվարի	(5,708)	-	-	(5,708)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	5,708	-	-	5,708
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(15,254)	-	-	(15,254)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	(15,254)	-	-	(15,254)

14 Ներդրումային արժեթղթեր

(ա) Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Բանկի կողմից պահվող		
Պարտքային և հաստատուն եկամտով այլ գործիքներ		
- ՀՀ պետական արժեթղթեր	24,410,369	12,641,395
- ՀՀ եվրոպարտատոմսեր	1,008,887	-
- Արցախի Հանրապետության պետական արժեթղթեր	197,379	211,021
Ընդամենը պետական պարտատոմսեր	25,616,635	12,641,395
Ներդրումային հիմնադրամների պարտատոմսեր		
- վարկանիշ չունեցող	1,689,405	-
Ընդամենը ներդրումային հիմնադրամների պարտատոմսեր	1,689,405	-
Կորպորատիվ պարտատոմսեր		
- Ba1-ից Ba3 վարկանիշով	6,629,795	5,573,631
- B1-ից B3 վարկանիշով	3,539,556	3,744,001
- վարկանիշ չունեցող	4,841,097	4,928,369
Ընդամենը կորպորատիվ պարտատոմսեր	15,010,448	14,246,001
Բաժնային գործիքներ		
Կորպորատիվ բաժնետոմսեր	110,448	110,969
Ընդամենը Բանկի կողմից պահվող իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	42,426,936	26,998,365
Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		
Պարտքային և հաստատուն եկամտով այլ գործիքներ		
- ՀՀ եվրոպարտատոմսեր	-	5,974,127
Ընդամենը վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	5,974,127
Ընդամենը իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	42,426,936	32,972,492

Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի պարտքային որակը բացահայտելու համար Բանկն օգտագործում է «Moody's» վարկանիշային գործակալության վարկանիշները: Ղեկավարության գնահատմամբ վարկանիշ չունեցող գործիքների վարկանիշը մոտավորապես համապատասխանում է «Moody's» գործակալության վարկանիշային համակարգի B1 վարկանիշին:

Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար: Կորստի պահուստը չի ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթերի հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է:

հազ. դրամ	2022թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր	266,942	-	-	266,942
Կորստի պահուստի գուտ վերաչափում	100,240	-	-	100,240
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	367,182	-	-	300,240

հազ. դրամ	2021թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր	268,789	-	-	268,789
Կորստի պահուստի գուտ վերաչափում	(1,847)	-	-	(1,847)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	266,942	-	-	266,942

(i) Որպես իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող նախորոշված չգնանշվող բաժնային արժեթղթեր

Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներում ներառված են ստորև ներկայացված չգնանշվող բաժնային արժեթղթերը:

Անվանումը	Գրանցման երկիրը	Հիմնական գործունեությունը	Վերահսկվող %		2022թ.	2021թ.
			2022թ.	2021թ.	հազ. դրամ	հազ. դրամ
ԱրՔա	Հայաստանի Հանրապետություն	Վճարային համակարգ	6.25%	6.25%	82,500	82,500
«Ա.Զ.Ո.Ա. Զբեդիտ Ուեփոթինգ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Վարկային տեղեկատվական գործակալություն	4.69%	4.69%	25,065	25,065
SWIFT	Բելիզիա	Դրամական փոխանցումներ	0.00%	0.00%	2,883	3,404
					110,448	110,969

2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներդրումները հիմնականում ներառում են պարտադիր բաժնետոմսերը ֆոնդային բորսաներում և քլիրինգային կազմակերպություններում: Բանկի ղեկավարությունը գտնում է, որ այս գործիքների գնահատված իրական արժեքները մոտարկվում են դրանց սկզբնական արժեքներին 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

(բ) Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Բանկի կողմից պահվող		
Պարտքային և հաստատուն եկամտով այլ գործիքներ		
- ՀՀ պետական արժեթղթեր	5,812,978	1,496,244
- Արցախի Հանրապետության պետական արժեթղթեր	1,917,304	1,917,392
Ընդամենը պետական պարտատոմսեր	7,730,282	3,413,636
Ներդրումային հիմնադրամների պարտատոմսեր		
վարկանիշ չունեցող	-	309,654
Ընդամենը ներդրումային հիմնադրամների պարտատոմսեր	-	309,654
Կորպորատիվ պարտատոմսեր		
- Ba1-ից Ba3 վարկանիշով	263,237	633,675
- B1-ից B3 վարկանիշով	90,903	283,262
- վարկանիշ չունեցող	958,620	2,467,682
Ընդամենը կորպորատիվ պարտատոմսեր	1,312,760	3,384,619
Ընդամենը Բանկի կողմից պահվող ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	9,043,042	7,107,908
Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		
Պարտքային և հաստատուն եկամտով այլ գործիքներ		
- ՀՀ պետական արժեթղթեր	-	6,844,911
Ընդամենը պետական պարտատոմսեր	-	6,844,911
Ընդամենը վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր		
Ընդամենը համախառն ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	9,043,042	13,952,819
Պարտքային կորստի պահուստ	(11,543)	(92,573)
Ընդամենը զուտ ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	9,031,499	13,860,246

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի պարտքային որակը բացահայտելու համար Բանկն օգտագործում է «Moody's» վարկանիշային գործակալության վարկանիշները: Ղեկավարության գնահատմամբ վարկանիշ չունեցող գործիքների վարկանիշը մոտավորապես համապատասխանում է «Moody's» գործակալության վարկանիշային համակարգի B1 վարկանիշին:

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

հազ. դրամ	2022թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր				
Մնացորդը առ 1 հունվարի	(92,753)	-	-	(92,753)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	81,210	-	-	81,210
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	(11,543)	-	-	(11,543)

հազ. դրամ	2021թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր				
Մնացորդը առ 1 հունվարի	(123,327)	-	-	(123,327)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	30,574	-	-	30,574
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	(92,753)	-	-	(92,753)

15 Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Պահանջներ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ		
Վարկային քարտերով գործառնությունների համար դեպոնացված միջոց ՀՀ ԿԲ-ում	1,080,000	827,000
Ավանդ ՀՀ ԿԲ-ում, պարտադիր պահուստներ	20,223,692	5,390,350
Ընդամենը պահանջներ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ	21,303,692	6,217,350
Վարկեր և ավանդներ		
Հայկական բանկեր և ֆինանսական կազմակերպություններ		
- Ba1-ից Ba3 վարկանիշով	119,950	292,746
- վարկանիշ չունեցող	3,157,563	2,722,936
Այլ ոչ ռեզիդենտ բանկեր և ֆինանսական կազմակերպություններ		
- Ba1-ից Ba3 վարկանիշով	2,361,814	-
- վարկանիշ չունեցող	6,458,773	263,328
Ընդամենը վարկեր և ավանդներ	12,098,100	3,279,010
Ընդամենը բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված համախառն վարկեր և փոխատվություններ	33,401,792	9,496,360
Պարտքային կորստի գծով պահուստ	(71,654)	(113,307)
Ընդամենը բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված զուտ վարկեր և փոխատվություններ	33,330,138	9,383,053

(ա) Մնացորդներ ՀՀ ԿԲ-ում

Վարկային քարտերով գործառնությունների համար ՀՀ ԿԲ-ում դեպոնացված միջոցը ոչ տոկոսակիր ավանդ է, որը հաշվարկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կանոնակարգերի համաձայն և որի երթագրումը սահմանափակված է:

Բանկերից պահանջվում է ՀՀ ԿԲ-ում պահել կանխիկ ավանդ (պարտադիր պահուստ) ներգրավված միջոցների համար: ՀՀ դրամով ներգրավված միջոցների համար պարտադիր պահուստը կազմում է 4% (2021թ-ին՝ 4%) և ամբողջությամբ պահվում է ՀՀ դրամով: Արտարժույթով ներգրավված միջոցների համար պարտադիր պահուստը կազմում է 18%, որից 8%-ը պահվում է ՀՀ դրամով, իսկ 10%-ը՝ ներգրավված միջոցների համապատասխան արտարժույթով (2021թ-ին՝ 10%՝ ՀՀ դրամով և 8%՝ ներգրավված միջոցների համապատասխան արտարժույթով): ՀՀ դրամով պահվող ավանդը երթագրելու Բանկի իրավունքը չի սահմանափակվում օրենսդրությամբ, սակայն եթե Բանկը չի ապահովում պահուստի նվազագույն միջին ամսական գումարը, վերջինիս նկատմամբ կարող են կիրառվել պատժամիջոցներ: ՀՀ դրամով պահվող պարտադիր պահուստները դասակարգվում են որպես դրամական միջոցներ և դրանց դրամական համարժեքներ (տես Ծանոթագրություն 13), քանի որ կարող են երթագրվել անհրաժեշտության դեպքում:

Արտարժույթով պահվող պարտադիր պահուստի համար Բանկն պարտավոր է ապահովել նվազագույն օրական մնացորդ: Այս պահուստները չեն համարվում դրամական միջոցներ և դրանց դրամական համարժեքներ և ներառված են բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերի և փոխատվությունների կազմում:

(բ) Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերի և փոխատվությունների կենտրոնացում

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի, Բանկը չունի այնպիսի պայմանագրային կողմեր, որոնց գծով մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը (2021թ-ին նման պայմանագրային կողմերի չկային, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի):

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված արժեքով չափվող բանկերին տրված վարկերի և փոխատվությունների գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

հազ. դրամ	2022թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող՝ բանկերին տրված վարկեր և փոխատվություններ				
Մնացորդը առ 1 հունվարի	(113,307)	-	-	(113,307)
Կորստի պահուստի գուտ վերաչափում	41,653	-	-	41,653
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	(71,654)	-	-	(71,654)

հազ. դրամ	2021թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող՝ բանկերին տրված վարկեր և փոխատվություններ				
Մնացորդը առ 1 հունվարի	(108,337)	-	-	(108,337)
Կորստի պահուստի գուտ վերաչափում	(4,970)	-	-	(4,970)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	(113,307)	-	-	(113,307)

(գ) Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերի և փոխատվությունների պարտքային որակը

Ղեկավարության գնահատմամբ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 9,616,336 հազար գումարով վարկանիշ չունեցող գործիքների վարկանիշը մոտավորապես համապատասխանում է «Moody's» գործակալության վարկանիշային համակարգի B1-ից B3 վարկանիշին (2021թ-ին՝ 2,986,264 հազար գումարով վարկանիշ չունեցող գործիքների վարկանիշը մոտավորապես համապատասխանում էր «Moody's» գործակալության վարկանիշային համակարգի B1-ից B3 վարկանիշին):

Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերը և փոխատվություններն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ և չափվում են ամորտիզացված արժեքով 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերը և փոխատվությունները պարտքային առումով արժեզրկված չեն և ժամկետանց չեն:

Պարտքային որակը բացահայտելու համար Բանկն օգտագործում է «Moody's» վարկանիշային գործակալության վարկանիշները:

16 Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Տեղական ֆինանսական կազմակերպություններից ստացվելիք գումարներ	7,875,241	6,592,620
Ընդամենը համախառն ստացվելիք գումարներ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով	7,875,241	6,592,620
Պարտքային կորստի գծով պահուստ	-	-
Ընդամենը գուտ ստացվելիք գումարներ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով	7,875,241	6,592,620

2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ, որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարները վերագրելի են վարկանիշ չունեցող խոշոր տեղական ֆինանսական կազմակերպություններին: Բոլոր գումարները դասված են 1-ին փուլ և չափվում են ամորտիզացված արժեքով 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Ղեկավարության գնահատմամբ վարկանիշ չունեցող գործիքների վարկանիշը մոտավորապես համապատասխանում է «Moody's» գործակալության վարկանիշային համակարգի B1 վարկանիշին: Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարները պարտքային առումով արժեզրկված չեն և ժամկետանց չեն:

Ակտիվների համար որպես ապահովություն ընդունված գրավ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված ֆինանսական ակտիվների (<< պետական արժեթղթեր) իրական արժեքը կազմում է 8,192,269 հազար դրամ (2021թ-ին՝ 7,040,711 հազար դրամ):

Այս գործարքներն իրականացվում են փոխատվության, արժեթղթերի փոխառության և փոխատվություն ստանդարտ գործառնություններին բնորոշ պայմաններով:

17 Հաճախորդներին տրված վարկեր

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
		Վերահաշ- վարկված	Վերահաշ- վարկված
Իրավաբանական անձանց տրված վարկեր			
Վարկեր խոշոր ընկերություններին	68,170,180	62,627,357	67,797,808
Վարկեր փոքր և միջին ընկերություններին	21,590,165	20,209,578	18,174,608
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	89,760,345	82,836,935	85,972,416
Ֆիզիկական անձանց տրված վարկեր			
Գյուղատնտեսական վարկեր	3,615,737	2,796,396	1,898,599
Անշարժ գույքի գրավով սպառողական վարկեր	32,508,068	26,078,059	24,002,753
Ոսկու գրավով վարկեր	9,352,940	12,481,206	13,642,006
Հիփոթեքային վարկեր	26,652,170	23,083,420	21,700,534
Գրավով ապահովված այլ սպառողական վարկեր	1,072,931	782,193	557,077
Գրավով չապահովված սպառողական վարկեր	7,519,368	8,135,708	8,464,420
Ընդամենը ֆիզիկական անձանց տրված վարկեր	80,721,214	73,356,982	70,265,389
Ընդամենը հաճախորդներին տրված համախառն վարկեր	170,481,559	156,193,917	156,237,805
Պարտքային կորստի պահուստ	(4,035,955)	(4,940,617)	(7,252,736)
Ընդամենը հաճախորդներին տրված գուտ վարկեր	166,445,604	151,253,300	148,985,069

(ա) Հաճախորդներին տրված վարկերի պարտքային որակը

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի պարտքային որակի վերաբերյալ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Վարկեր խոշոր ընկերություններին				
- ոչ ժամկետանց	60,930,532	3,705,713	-	64,636,245
- մինչև 30 օր ժամկետանց	82,536	-	-	82,536
- 31-90 օր ժամկետանց	-	236,965	-	236,965
- ավելի քան 270 օր ժամկետանց	-	-	3,214,434	3,214,434
Ընդամենը համախառն վարկեր խոշոր ընկերություններին	61,013,068	3,942,678	3,214,434	68,170,180
Պարտքային կորստի պահուստ	(79,666)	(395,268)	(1,169,733)	(1,644,667)
Բանկն ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է հավանականությամբ կշռված մի շարք սցենարներով՝ գնահատելու համար ակնկալվող դրամական պակասուրդները՝ գեղջված արդյունավետ տոկոսադրույքին մոտավոր համարժեք դրույքով: Դրամական պակասուրդը պայմանագրին համապատասխան կազմակերպությանը հասանելի բոլոր պայմանագրային դրամական հոսքերի և կազմակերպության կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է:

Ստորև ներկայացված են ակնյավոր պարտքային կորուստների հաշվարկի մեթոդները և առանցքային տարրերը:

Պարտազանցման տեղի ունենալու հավանականության *Պարտազանցման տեղի ունենալու հավանականությունը* որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտազանցման հավանական լինելու գնահատումն է: Պարտազանցումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի պահի գնահատված ժամանակահատվածում, եթե գործիքը նախկինում չի ապահանաչվել և դեռևս պորտֆելում է:

Պարտքի գումարը պարտազանցման պահին *Պարտքի գումարը պարտազանցման պահին* ապագա պարտազանցման ամսաթվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարքտի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ, փոխառություն ստանալու իրավունքի օգտագործումը և բաց թողնված վճարումների գծով հաշվեգրված տոկոսները:

Կորուստը պարտազանցման դեպքում *Կորուստը պարտազանցման դեպքում* դա այն կորստի գնահատված գումարն է, որը կառաջանա, եթե որոշակի պահի տեղի ունենա պարտազանցում: Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից: Այն սովորաբար արտահայտվում է որպես պարտազանցման պահին պարտքի գումարի տոկոս:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը հիմնված է այն պարտքային կորուստների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում (ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ կամ ԱԺԱՊԿ), եթե տեղի չի ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որի դեպքում պահուստը հիմնվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների վրա:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից: Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները և 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ կախված ֆինանսական գործիքների համապատասխան պորտֆելի բնույթից:

Բանկի կողմից մշակված քաղաքականության համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատվում է արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի մնացած մասի ընթացքում պարտազանցման տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը:

Վերը նշված գործընթացի հիման վրա Բանկը խմբավորում է իր վարկերն ըստ փուլերի՝ 1-ին փուլի, 2-րդ փուլի, 3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված, ինչպես ներկայացված է ստորև.

- 1-փուլ *Վարկերի սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը ճանաչում է պահուստ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: 1-ին փուլի վարկերը ներառում են նաև գործիքներ, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:*
- 2-րդ փուլ *Երբ վարկի պարտքային ռիսկը նշանակալիորեն աճում է սկզբնական ճանաչումից ի վեր, սակայն բացակայում է պարտքային առումով արժեզրկված լինելու հայտանիշ, Բանկը ձևավորում է պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով: 2-րդ փուլի վարկերը ներառում են նաև գործիքներ, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:*
- 3-րդ փուլ *Վարկերը համարվում են պարտքային առումով արժեզրկված: Բանկը ձևավորում է պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով:*

Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված

Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Սկզբնական ճանաչման պահին ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: Ակնկալվող պարտքային կորուստների ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով հետագայում փոխվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները:

Պարտագանգման սահմանում

Բանկը համարում է, որ ֆինանսական գործիքի գծով տեղի է ունեցել պարտագանգում և, հետևաբար, այն դասում է 3-րդ փուլ (պարտքային առումով արժեզրկված) ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պարտավորությունները դառնում են 90 օր ժամկետանց պայմանագրով նախատեսված ժամկետից:

Հաճախորդի կողմից պարտականությունների չկատարման որակական գնահատման շրջանակում Բանկը դիտարկում է նաև տարբեր դեպքեր, այդ թվում՝ այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի ավելի քան 90 օր ժամկետանցությունը, վարկառուի մոտ ավելի քան 30 օր ժամկետանց վարկի առկայությունը՝ վարկի պայմանների վերանայումից հետո, վարկառուի ֆինանսական վիճակի էական վատթարացումը և այլ դեպքեր, որոնք կարող են վկայել վճարման անհավանականության մասին՝ ելնելով դեկլարացիայի դատողությունից: Եթե այդ դեպքը տեղի է ունենում, Բանկը մանրամասն դիտարկում է, թե արդյոք դրա արդյունքում հաճախորդը պետք է դիտարկվի որպես պարտականությունները չկատարած և դասվի 3-րդ փուլ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար, կամ արդյոք 2-րդ փուլ դասելը տեղին է:

Պարտագանգման տեղի ունենալու հավանականության գնահատման գործընթաց

Պահառուական և միջբանկային հարաբերություններ

Բանկի պահառուական և միջբանկային հարաբերությունները և պայմանագրային կողմերն իրենցից ներկայացնում են ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններ, բանկեր, բրոքերներ և դիլերներ, ֆոնդային բորսաներ և քլիրինգային կազմակերպություններ: Այս հարաբերությունների հետ կապված Բանկը վերլուծում է հրապարակայնորեն հասանելի տեղեկատվությունը, մասնավորապես ֆինանսական տեղեկատվությունը և արտաքին աղբյուրներից ստացված այլ տվյալները, օրինակ՝ արտաքին վարկանիշերը:

Հաճախորդներին տրված վարկեր

Հաճախորդներին տրված վարկերի գծով պարտագանգման տեղի ունենալու հավանականությունը հիմնված է անցյալ ժամանակաշրջանների տեղեկատվության վրա և հաշվարկվում է հավանականության փոփոխության մատրիցների միջոցով՝ հիմք ընդունելով վարկային պորտֆելների ժամկետայնության վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տեղեկատվությունը: Հավանականությունը հաշվարկվում է որպես ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ընդհանուր վարկերի ժամկետանց դասերի միջև տեղափոխվող վարկերի մասնաբաժինը: Պարտագանգման տեղի ունենալու հավանականությունը հաշվարկելիս Բանկը դիտարկում է ապագայամետ մակրոտնտեսական պարամետրերը, որոնք էական ազդեցություն են ունեցել պարտագանգման տեղի ունենալու հավանականության վրա:

Ժամկետանց օրերն օգտագործվում են որպես հիմնական ելակետային տվյալներ խմբային հիմունքով գնահատվող՝ պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքների գծով պարտագանգման տեղի ունենալու հավանականության ժամկետային կառուցվածքը ստեղծելիս անցումային մատրիցների Մարկովի մոդելում: Անցումային մատրիցները կառուցվում են նախորդ 24 ամիսների տվյալների հիման վրա:

1-ին փուլին և 2-րդ փուլին դասված հաճախորդներին տրված վարկերի համար, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են խմբային հիմունքով, կիրառվում են պարտազանցման հավանականության հետևյալ միջին տոկոսները.

	12 ամսում պարտազանցման տեղի ունենալու հավանականություն	Ամբողջ ժամկետի ընթացքում պարտազանցման տեղի ունենալու հավանականություն
Իրավաբանական անձանց տրված վարկեր		
- ոչ ժամկետանց	0.45% - 0.54%	61.25% - 65.32%
- մինչև 30 օր ժամկետանց	30.53% - 34.38%	61.25% - 65.32%
- 30-89 օր ժամկետանց		65.32% - 84.24%
Ֆիզիկական անձանց տրված վարկեր		
- ոչ ժամկետանց	0.47% - 4.80%	34.19% - 81.72%
- մինչև 30 օր ժամկետանց	10.04% - 33.31%	34.19% - 81.72%
- 30-89 օր ժամկետանց		34.19% - 86.13%

Պարտքի գումարը պարտազանցման պահին

Պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է արժեզրկման տեսանկյունից գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը՝ հաշվի առնելով հաճախորդի՝ պարտքի գումարը մեծացնելու հնարավորությունը պարտազանցման դեպքում: 1-ին փուլի վարկի գծով պարտազանցման պահին պարտքի գումարը հաշվարկելու նպատակով՝ Բանկը գնահատում է 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելու համար: 2-րդ-փուլի ֆինանսական ակտիվների համար պարտազանցման պահին պարտքի գումարը դիտարկվում է գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում տեղի ունեցող դեպքերի համար: 3-րդ-փուլի և ձեռքբերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար պարտազանցման պահին պարտքի գումարը հավասար է հաշվեկշռային արժեքին:

Կորուստը պարտազանցման դեպքում

Բանկն պարտազանցման դեպքում կորուստը հաշվարկում է անհատական հիմունքով՝ հաշվի առնելով ակնկալվող դրամական միջոցները, ներառյալ գրավի իրացումից ստացվելիք դրամական հոսքերը:

Անհատական հիմունքով հաշվարկվող պարտազանցման դեպքում առաջացող կորուստը գնահատելու համար Բանկը կիրառում է հետևյալ ենթադրությունները.

- անշարժ գույք հանդիսացող գրավի արժեքը նվազեցվում է 30%-ով, իսկ շարժական գույքի արժեքը՝ 40%-80%-ով,
- գրավի իրացման ժամկետը գնահատվում է 36 ամիս:

Պարտքային ռիսկի նշանակալի ան

Բանկի կողմից մշակված քաղաքականության համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատվում է արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի ան սկզբնական ճանաչումից ի վեր:

Բանկն օգտագործում է երկու չափանիշ որոշելու համար, թե արդյոք տեղի է ունցել պարտքային ռիսկի նշանակալի ան՝

- որակական ցուցանիշներ և
- ժամկետանցության 30-օրյա սահմանափակիչ:

Պարտքային ռիսկին ենթարկվող գործիքները կանոնավոր կերպով վերահսկվում են, որի արդյունքում հնարավոր է որոշել, թե արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի ան: Վերահսկողության համար որպես կանոն օգտագործվում է հետևյալ տեղեկատվությունը.

Ենթարկվածությունը պարտքային ռիսկին (իրավաբանական անձիք)	Ենթարկվածությունը պարտքային ռիսկին (իրավաբանական և ֆիզիկական անձիք)
<ul style="list-style-type: none"> - Հաճախորդի փաստաթղթերի, օրինակ՝ աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների, կառավարչական հաշվետվությունների, բյուջեների և կանխատեսումների պարբերական ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը: Ցուցանիշները, որոնց հատուկ ուշադրություն է դարձվում, ներառում են՝ համախառն շահույթը, ֆինանսական լծակավորման ցուցանիշը, պարտքի սպասարկման գործակիցը, համապատասխանությունը կովենանտներին, կառավարման որակը, վերադաս դեկավար անձնակազմի փոփոխությունները 	<ul style="list-style-type: none"> - Վճարումների մասին տեղեկատվությունը, ներառյալ ժամկետանցության կարգավիճակի, մարումների փոփոխականության մասին տեղեկատվությունը:
<ul style="list-style-type: none"> - Վարկանիշային գործակալությունների, մամուլի հոդվածների տվյալները, արտաքին վարկանիշների փոփոխությունների մասին տեղեկատվությունը 	<ul style="list-style-type: none"> - Տրամադրված սահմանաչափի օգտագործումը - Վարկային պայմանագրի պայմանների վերանայման դիմումը և դիմումի բավարարումը
<ul style="list-style-type: none"> - Պարտատոմսերի գնանշված գները և պարտքի պարտագանցման սկիզբի գները փոխառուի համար՝ առկայության դեպքում 	<ul style="list-style-type: none"> - Գործարար, ֆինանսական և տնտեսական պայմանների առկա և կանխատեսվող փոփոխությունները
<ul style="list-style-type: none"> - Փոխառուի քաղաքական, օրենսդրական և տեխնոլոգիական միջավայրի կամ նրա գործունեության փաստացի և ակնկալվող նշանակալի փոփոխությունները 	

Ապագայամետ տեղեկատվություն և տարբեր տնտեսական սցենարներ

Ակնկալվող պարտքային կորուստների մոդելներում Բանկն օգտագործում է ապագայամետ տեղեկատվություն լայն շրջանակ որպես տնտեսական երակետային տվյալներ: Բանկն ակնկալվող պարտքային կորուստների մոդելում ներառում է տնտեսական ցուցանիշներ, որոնք համակարգված կապ ունեն պորտֆելի անցյալ ժամանակաշրջանների պարտագանցման դրույքների հետ, որոնցից են.

- համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ),
- ստացված զուտ ընթացիկ դրամական փոխանցումները,
- գործազրկության մակարդակը,
- ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքը,
- զուտ արտահանումը,
- սպառողական գների ինդեքսը,
- անշարժ գույքի գները և այլն:

Այն պորտֆելների համար, որոնց վերաբերյալ Բանկն ունի անցյալ ժամանակաշրջանների սահմանափակ տվյալներ, օգտագործվում է արտաքին աղբյուրներից ստացված ուղենիշային տեղեկատվությունը՝ ներքին աղբյուրներից հասանելի տեղեկատվությունը լրացնելու համար:

Ստորև ներկայացված են այն պորտֆելները, որոնց համար արտաքին աղբյուրներից ստացված ուղենիշային տեղեկատվությունն օգտագործվել է որպես նշանակալի ելակետային տվյալ ակնկալվող պարտքային կորուստները չափելիս:

	2022թ. հազ. դրամ Պարտքային ռիսկին ենթարկվածություն	2021թ. հազ. դրամ Պարտքային ռիսկին ենթարկվածություն	Օգտագործված արտաքին աղբյուրներից ստացված ուղենիշային տեղեկատվություն	
			Պարտազանցման տեղի ունենալու հավանականություն	Կորուստը պարտազանցման դեպքում
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	66,948,754	33,619,427	«Moody's»-ի պարտազանցման վերլուծության հաշվետվություն	«Moody's»-ի պարտազանցման վերլուծության հաշվետվություն
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	42,426,936	32,972,492	«Moody's»-ի պարտազանցման վերլուծության հաշվետվություն	«Moody's»-ի պարտազանցման վերլուծության հաշվետվություն
Հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	9,043,042	13,952,819	«Moody's»-ի պարտազանցման վերլուծության հաշվետվություն	«Moody's»-ի պարտազանցման վերլուծության հաշվետվություն
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	33,401,792	9,499,093	«Moody's»-ի պարտազանցման վերլուծության հաշվետվություն	«Moody's»-ի պարտազանցման վերլուծության հաշվետվություն
Հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	7,875,241	6,592,620	«Moody's»-ի պարտազանցման վերլուծության հաշվետվություն	«Moody's»-ի պարտազանցման վերլուծության հաշվետվություն
Այլ ֆինանսական ակտիվներ	1,475,388	1,250,844	«Moody's»-ի պարտազանցման վերլուծության հաշվետվություն	«Moody's»-ի պարտազանցման վերլուծության հաշվետվություն

Պարտքային ռիսկի կենտրոնացում

Պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և չճանաչված պայմանագրային հանձնառությունների գումարներում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ պարտքային ռիսկի նվազեցման վրա:

Գրավ սովորաբար չի պահանջվում ածանցյալ ֆինանսական գործիքների, արժեթղթերում ներդրումների և բանկերին տրված վարկերի նկատմամբ պահանջների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետզնման և արժեթղթերի փոխառության գործունեության մաս:

Հանախորդներին տրված վարկերի գրավի և այդ վարկերի գծով պարտքային ռիսկի կենտրոնացման մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 17-ում:

Զճանաչված պայմանագրային հանձնառությունների գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածության ասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 29-ում:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են այն ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հաշվանցվում են Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր պայմանագրի կամ համանման գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցվելու հանգամանքից:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ամանցյալ գործիքների քլիրինգի պայմանագրերը, հետգնման գլխավոր պայմանագրերը և արժեթղթերի փոխատվության գլխավոր պայմանագրերը: Համանման ֆինանսական գործիքները ներառում են ամանցյալ գործիքները, վաճառքի և հետգնման պայմանագրերը, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերը և արժեթղթերի փոխառության և փոխատվության պայմանագրերը:

Բանկը ստանում և ընդունում է գրավ շուկայում շրջանառվող արժեթղթերի տեսքով վաճառքի և հետգնման, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերի գծով:

Այս գրավի համար գործում են տվյալ ոլորտում ընդունված ստանդարտ պայմանները: Սա նշանակում է, որ որպես գրավ ստացված/տրամադրված արժեթղթերը կարող են գրավադրվել կամ վաճառվել գործարքի ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն մինչև գործարքի ավարտը: Այս պայմանները յուրաքանչյուր պայմանագրային կողմին իրավունք են տալիս նաև դադարեցնել համապատասխան գործարքը՝ պայմանագրային կողմի կողմից գրավ տրամադրելու անկարողության դեպքում:

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցման պայմանները: Պատճառն այն է, որ այս պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Բանկի կամ պայմանագրային կողմերի կողմից պարտագանցում կատարելու, անվճարունակ դառնալու կամ սնանկանալու դեպքում:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորությունների գուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ	Որպես գրավ ստացված դրամական միջոցներ	Զուտ գումար
		Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ				
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	7,875,241	-	7,875,241	(7,875,241)	-	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	7,875,241	-	7,875,241	(7,875,241)	-	-
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	-	-	-	-	-	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	-	-	-	-	-	-

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ֆին. պարտավորության/ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորությունների գույտ գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ	Որպես գրավ ստացված դրամական միջոցներ	Զուտ գումար
		Ֆինանսական գործիքներ	Ֆինանսական գործիքներ			
Հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6,592,620	-	6,592,620	(6,592,620)	-	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	6,592,620	-	6,592,620	(6,592,620)	-	-
Հետզնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(12,008,019)	-	(12,008,019)	(12,008,019)	-	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	(12,008,019)	-	(12,008,019)	12,008,019	-	-

Վերը աղյուսակներում բացահայտված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն և գույտ գումարները չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Ծուկայական ռիսկ

Ծուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Ծուկայական ռիսկը ներառում է արժույթային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Ծուկայական ռիսկն առաջանում է տոկոսակիր և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձնահատուկ փոփոխությունների ազդեցությանը և շուկայական գների ու արտարժույթի փոխարժեքների փոփոխականության մակարդակի փոփոխություններին: Ծուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Ծուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատվություն է կրում ԱՊԿՀ-ն: Ծուկայական ռիսկի սահմանաչափերը հաստատվում են ԱՊԿՀ-ի կողմից՝ Ռիսկերի կառավարման վարչության առաջարկությունների հիման վրա:

Բանկը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների գծով, տոկոսադրույքների փոփոխության ժամկետներ, արտարժույթի դիրքեր և կորուստների սահմանաչափեր, որոնք կանոնավոր կերպով վերահսկվում, ուսումնասիրվում և հաստատվում են Վարչության կողմից:

(i) Տոկոսադրույքային ռիսկ

Տոկոսադրույքային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետևանքով: Բանկը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական հոսքերի վրա շուկայում գերակշռող տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել այն կամ հանգեցնել կորուստների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխությունների դեպքում:

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծություն

Տոկոսադրույքային ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների ճեղքվածքի հսկողության միջոցով: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների ճեղքվածքի վերաբերյալ տեղեկատվությունը հիմնական ֆինանսական գործիքների համար:

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսակիր	Հաշվեկշռ. արժեք
31 դեկտեմբերի 2022թ. ԱԿՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7,305,117	-	-	-	-	78,191,557	85,496,674
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	2,068	-	-	-	-	-	2,068
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	2,554,880	6,443,978	3,671,299	23,539,676	6,106,655	110,448	42,426,936
Անորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	157,882	1,230,668	497,117	5,582,879	1,562,953	-	9,031,499
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ	10,440,014	420,966	167,000	430,865	567,601	21,303,692	33,330,138
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	7,875,241	-	-	-	-	-	7,875,241
Հանախորդներին տրված վարկեր	17,119,385	13,293,356	18,803,117	93,341,370	23,888,376	-	166,445,604
	45,454,587	21,388,968	23,138,533	122,894,790	32,125,585	99,605,697	344,608,160
ՊԱՐՏԱՎՈՐՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐ							
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	1,597,710	311,897	520,039	2,877,440	-	-	5,307,086
Այլ փոխառու միջոցներ և ստորադաս պարտավորություններ	3,796,212	3,875,174	8,732,217	36,456,318	3,787,454	-	56,647,375
Թողարկված պարտքային արժեթղթեր	61,353	67,596	1,217,588	4,140,548	-	-	5,487,085
Հանախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	8,794,275	8,049,345	26,657,430	44,418,167	93,030	141,400,939	229,413,186
Վարձակալության գծով պարտավորություններ	125,126	92,503	277,510	2,627,103	179,781	-	3,302,023
	14,374,676	12,396,515	37,404,784	90,519,576	4,060,265	141,400,939	300,156,755
	31,079,911	8,992,453	(14,266,251)	32,375,214	28,065,320	(41,795,242)	44,451,405

Տոկոսադրույքի ճեղքվածքի բացասական կարճաժամկետ դիրքը կառավարելու համար Բանկն օգտագործում է ներդրումային արժեթղթերը, որոնք կարող են վաճառվել կամ գրավադրվել հետգնման պայմանագրերի դիմաց, և հիմնվում է ենթադրության վրա, որ ընթացիկ հաշիվներից ելքագրված գումարները և ժամկետային ավանդները կփոխարինվեն:

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսակիր	Հաշվեկշռ. արժեք
31 դեկտեմբերի 2021թ.							
ԱԿՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4,309,385	-	-	-	-	39,106,346	43,415,731
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	2,733	-	-	-	-	-	2,733
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	1,962,940	4,564,240	1,958,675	16,043,605	8,332,065	110,967	32,972,492
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	108,609	2,886,089	1,508,598	6,817,895	2,539,055	-	13,860,246
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	760,489	-	1,065,180	496,190	843,842	6,217,352	9,383,053
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6,592,620	-	-	-	-	-	6,592,620
Հանախորդներին տրված վարկեր	19,478,333	15,235,699	19,875,349	73,692,099	22,971,820	-	151,253,300
	33,215,109	22,686,028	24,407,802	97,049,789	34,686,782	45,434,665	257,480,175
ՊԵՐՏԱՎՈՐՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐ							
Հանախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	2,474,654	506,210	3,036,368	65,684,628	75,898	52,989,017	124,766,775
Այլ փոխառու միջոցներ և ստորադաս պարտավորություններ	3,495,702	3,746,373	13,194,552	45,066,272	4,225,064	-	69,727,963
Թողարկված պարտքային արժեթղթեր	4,117,307	3,095,347	1,091,715	4,694,118	-	-	12,998,487
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	946,991	1,345,427	1,094,592	1,254,589	-	-	4,641,599
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	12,008,019	-	-	-	-	-	12,008,019
Վարձակալության գծով պարտավորություններ	156,630	86,807	260,422	1,777,571	1,249,655	-	3,531,085
	23,199,303	8,780,164	18,677,649	118,477,178	5,550,617	52,989,017	227,673,928
	10,015,806	13,905,864	5,730,153	(21,427,389)	29,136,165	(7,554,352)	29,806,247

Տոկոսադրույքի ներքվածքի բացասական կարճաժամկետ դիրքը կառավարելու համար Բանկն օգտագործում է ներդրումային արժեթղթերը, որոնք կարող են վաճառվել կամ գրավադրվել հետգնման պայմանագրերի դիմաց, և հիմնվում է ենթադրության վրա, որ ընթացիկ հաշիվներից ելքագրված գումարները և ժամկետային ավանդները կփոխարինվեն:

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2022թ.			2021թ.		
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ
Տոկոսակիր ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	-	-	-	-	-
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	9.72%	4.55%	2.42%	8.91%	4.61%	3.19%
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	7.63%	4.71%	3.96%	7.74%	3.75%	4.04%
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	12.64%	3.20%	6.57%	12.68%	8.37%	7.78%
Հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	11.50%	2.95%	3.00%	8.9%	2.6%	3.0%
Հաճախորդներին տրված վարկեր	13.6%	9.5%	7.1%	14.6%	9.86%	6.58%
Տոկոսակիր պարտավորություններ						
Այլ փոխառու միջոցներ և ստորադաս պարտավորություններ	7.14%	7.06%	5.14%	7.63%	5.52%	4.99%
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	6.80%	4.45%	-	6.65%	1.25%	0.47%
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ						
- Ժամկետային ավանդներ	9.82%	4.38%	2.29%	9.69%	4.66%	2.52%
- Ընթացիկ հաշիվներ	0-7%	0-3.5%	0-1.75%	0.10%	0.10%	0.00%
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	5.09%	-	-	5.60%	-
Վարձակալության գծով պարտավորություններ	9.00%	-	-	9.00%	-	-
Հետզնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	-	-	-	-	0.82%	-

Տոկոսադրույքի զգայնության վերլուծություն

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայնության հսկողությամբ: Ստորև ներկայացված է տոկոսադրույքների փոփոխությունների (վերագնորոշման ռիսկ) նկատմամբ գուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայնության վերլուծությունը, որն իրականացվել է տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) գուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գոյություն ունեցող դիրքերի հիման վրա:

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
100 բկ գուգահեռ նվազում	(239,839)	(154,878)
100 բկ գուգահեռ աճ	(239,839)	154,878

Ստորև ներկայացված է սեփական կապիտալի զգայնության վերլուծությունն իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքի փոփոխությունների նկատմամբ, որն իրականացվել է 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գոյություն ունեցող դիրքերի և եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) գուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

	2022թ. Սեփական կապիտալ հազ. դրամ	2021թ. Սեփական կապիտալ հազ. դրամ
100 բկ գուգահեռ նվազում	1,132,917	804,088
100 բկ գուգահեռ աճ	(1,132,917)	(727,965)

(ii) Արժույթային ռիսկ

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արժույթային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Թեև Բանկը հեջավորում է իր ենթարկվածությունն արժույթային ռիսկին, սակայն այդ գործառնությունները չեն որակվում որպես հեջավորման փոխհարաբերություն՝ ՓՀՄՍ պահանջների համաձայն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Այլ արտարժույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	50,177,921	17,953,744	2,352,101	70,483,766
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	7,601,673	496,528	-	1,041,173
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	618,840	422,333	-	30,743,073
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	21,495,800	2,850,413	6,396,860	3,644,275
Հակադարձ հետզման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	3,597,633	46,642	-	87,955,764
Հանախորդներին տրված վարկեր	83,163,572	4,792,192	-	536,551
Այլ ֆինանսական ակտիվներ	419,025	29,185	88,341	70,483,766
Ընդամենը ակտիվներ	167,074,464	26,591,037	8,837,302	202,502,803
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	1,201,086	301,027	-	1,502,113
Այլ փոխառու միջոցներ և ստորադաս պարտավորություններ	44,046,790	2,527,514	-	46,574,304
Թողարկված պարտքային արժեթղթեր	5,487,085	-	-	145,301,721
Հանախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	114,687,874	23,831,455	6,782,392	419,567
Այլ ֆինանսական պարտավորություններ	330,478	66,940	22,149	46,574,304
Ընդամենը պարտավորություններ	165,753,313	26,726,936	6,804,541	199,284,790
Արժույթային սվոփ պայմանագրեր	2,085,805	23,103	(2,114,700)	(5,792)
Զուտ դիրքը	3,406,956	(112,796)	(81,939)	3,212,221

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Այլ արտարժույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	22,285,957	3,013,697	819,353	26,119,007
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	7,301,852	640,606	-	7,942,458
Անորոշագրված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	1,212,133	542,619	-	1,754,752
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	6,051,829	611,974	255,653	6,919,456
Հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	1,272,517	110,230	-	1,382,747
Հանախորդներին տրված վարկեր	88,083,747	7,082,327	14,558	95,180,632
Այլ ֆինանսական ակտիվներ	556,987	9,918	170,624	737,529
Ընդամենը ակտիվներ	126,765,022	12,011,371	1,260,188	140,036,581
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	2,750,791	373,791	-	3,124,582
Այլ փոխառու միջոցներ և ստորադաս պարտավորություններ	53,752,619	4,344,312	-	58,096,931
Թողարկված պարտքային արժեթղթեր	12,998,487	-	-	12,998,487
Հանախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	54,886,631	7,199,177	685,185	62,770,993
Այլ ֆինանսական պարտավորություններ	558,650	63,402	169,929	791,981
Ընդամենը պարտավորություններ	124,947,178	11,980,682	855,114	137,782,974
Արժույթային ավոտի պայմանագրեր	827,152	(24,183)	(788,861)	14,108
Զուտ դիրքը	2,644,996	6,506	(383,787)	2,267,715

Ստորև աղյուսակում ներկայացված 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի նվազումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս հաշվի չեն առնվել հարկերը և հիմք են ընդունվել արտարժույթների փոխարժեքների փոփոխությունները, որոնք Բանկը դիտարկում է որպես ողջամտորեն հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Վերլուծությունն իրականացնելիս ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի աճ 10%-ով	340,696	264,500
ՀՀ դրամի նկատմամբ եվրոյի փոխարժեքի աճ 10%-ով	(11,280)	651

2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի աճը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման հիմնարար գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել կորուստների ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական հոսքերի հետ կապված պարտականությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Վարչության կողմից:

Բանկը ձգտում է պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածք, որը կազմված է թողարկված պարտքային արժեթղթերից, այլ բանկերից ստացված երկարաժամկետ և կարճաժամկետ վարկերից, հիմնական կորպորատիվ հաճախորդների և անհատների ավանդներից, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելներ՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և արդյունավետ բավարարելու համար:

Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և այդ դրամական հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտքի հաշվին ֆինանսավորման ներգրավման ծրագրերի մշակում,
- բարձր իրացվելի ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական հոսքերի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման անընդհատությունն ապահովող ծրագրերի մշակում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության հսկողություն:

Գանձապետարանը վարչություններից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի և սպազայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական հոսքերի կանխատեսումների վերաբերյալ: Այնուհետև, Գանձապետարանը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է առևտրական նպատակով պահվող կարճաժամկետ իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ Բանկում:

Գանձապետարանն իրականացնում է իրացվելիության դիրքի հսկողություն օրական կտրվածքով և իրացվելիության կանոնավոր «ստրեսային թեսթեր»՝ շուկայական սովորական և ավելի խիստ պայմանները ներառող տարբեր սցենարների շրջանակում: Սովորական շուկայական պայմաններում իրացվելիության դիրքի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են վերադաս դեկավարությանը շաբաթական կտրվածքով: Իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները կայացնում է ԱՊԿՀ-ի կողմից և իրականացվում են Գանձապետարանի կողմից:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական պարտավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով չգեղչված դրամական հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված ամենավաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված դրամական ներհոսքի և արտահոսքի ընդհանուր համախառն գումարներն իրենից ներկայացնում է չգեղչված պայմանագրային դրամական հոսքերը ֆինանսական պարտավորությունների կամ փոխատվության հանձնառությունների գծով:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ներհոսքի/ (արտահոսքի) ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ Այլ փոխառու միջոցներ և ստորադաս պարտավորություններ	1,277,387	316,537	311,897	557,120	3,432,079	5,895,020	5,307,086
Թողարկված պարտքային արժեթղթեր	1,942,953	1,896,430	3,832,003	9,340,327	48,544,527	65,556,240	56,647,375
Հանախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	38,817	28,780	67,597	1,348,373	4,561,913	6,045,479	5,487,085
Վարձակալության գծով պարտավորություններ	144,053,926	6,206,275	8,232,244	28,219,354	49,965,702	236,677,501	229,413,186
Այլ ֆինանսական պարտավորություններ	59,814	119,629	176,805	344,938	3,013,029	3,714,215	3,302,023
	1,027,308	-	-	-	-	1,027,308	1,027,308
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	148,400,204	8,567,651	12,620,546	39,810,112	109,517,250	318,915,763	301,184,063
Փոխավորության հանձնառություններ	17,991,833	-	-	-	-	17,991,833	-

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ներհոսքի/ (արտահոսքի) ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ Այլ փոխառու միջոցներ և ստորադաս պարտավորություններ	324,073	614,513	1,360,831	1,104,592	1,536,583	4,940,592	4,641,996
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	1,569,858	2,358,248	3,881,430	13,670,217	58,251,621	79,731,374	69,727,963
Թողարկված պարտքային արժեթղթեր	12,009,668	-	-	-	-	12,009,668	12,008,019
Հանախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	2,608,304	2,694,309	3,986,447	1,406,001	6,045,479	16,740,540	12,998,487
Վարձակալության գծով պարտավորություններ	54,616,503	859,428	518,096	3,212,356	74,328,036	133,534,419	124,766,775
Այլ ֆինանսական պարտավորություններ	67,082	120,627	180,940	422,195	4,315,827	4,315,827	5,106,671
	1,240,644	-	-	-	-	1,240,644	1,240,644
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	72,428,864	6,646,127	9,923,609	19,738,104	143,174,748	251,911,454	228,685,907
Փոխավորության հանձնառություններ	17,493,283	-	-	-	-	17,493,283	-

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ ակնկալվող մարման ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց*	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	85,496,674	-	-	-	-	-	-	85,496,674
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	2,068	-	-	-	-	-	-	2,068
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	168,826	2,386,054	10,115,277	23,539,676	6,106,655	110,448	-	42,426,936
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	90	157,792	1,727,785	5,582,879	1,562,953	-	-	9,031,499
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	10,409,617	30,397	587,966	430,865	567,601	21,303,692	-	33,330,138
Հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	7,662,267	212,974	-	-	-	-	-	7,875,241
Հանախորդներին տրված վարկեր	4,136,908	11,646,063	32,096,473	93,341,370	23,888,376	-	1,336,414	166,445,604
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	5,239,001	-	5,239,001
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	-	-	-	-	3,121,428	-	3,121,428
Առգրավված ակտիվներ	-	-	-	-	-	1,805,492	-	1,805,492
Հետաձգված հարկային ակտիվ	-	-	-	-	-	318,275	-	318,275
Այլ ակտիվներ	1,444,774	-	-	-	-	973,209	-	2,417,983
Ընդամենը ակտիվներ	109,321,224	14,433,280	44,527,501	122,894,790	32,125,585	32,871,545	1,336,414	357,510,339
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	1,283,060	314,650	831,936	2,877,440	-	-	-	5,307,086
Այլ փոխառու միջոցներ և ստորադաս պարտավորություններ	1,925,575	1,870,637	12,607,391	36,456,318	3,787,454	-	-	56,647,375
Թողարկված պարտքային արժեթղթեր	35,231	26,122	1,285,184	4,140,548	-	-	-	5,487,085
Հանախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	144,050,056	6,145,158	34,706,775	44,418,167	93,030	-	-	229,413,186
Վարձակալության գծով պարտավորություններ	40,834	84,292	370,013	2,446,505	360,379	-	-	3,302,023
Ընթացիկ հարկային պարտավորություններ	-	-	2,414,567	-	-	-	-	2,414,567
Այլ պարտավորություններ	2,220,912	-	-	-	-	-	238,925	2,459,837
Ընդամենը պարտավորություններ	149,555,668	8,440,859	52,215,866	90,338,978	4,240,863	-	238,925	305,031,159
Չուտ դիրքը	(40,234,444)	5,992,421	(7,688,365)	32,555,812	27,884,722	32,871,545	1,097,489	52,479,180

* Ընդհանուր ժամկետանց վարկերի ժամկետանց մասը

Բացասական կարճաժամկետ իրացվելիության դիրքը կառավարելու համար Բանկն օգտագործում է ֆինանսական արժեթղթերը, որոնք կարող են վաճառվել կամ գրավադրվել հետզնման պայմանագրերի դիմաց և հիմնվում է այն ենթադրության վրա, որ ընթացիկ հաշիվներից ելքագրված գումարները և ժամկետային ավանդները կփոխարինվեն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ ակնկալվող մարման ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց*	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	43,415,731	-	-	-	-	-	-	43,415,731
Աձանցյալ ֆինանսական ակտիվներ	2,733	-	-	-	-	-	-	2,733
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	302,769	1,660,171	6,522,915	16,043,605	8,332,065	110,967	-	32,972,492
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	2,418	106,191	4,394,687	6,817,895	2,539,055	-	-	13,860,246
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ	760,489	-	1,065,180	496,190	843,842	6,217,352	-	9,383,053
Հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6,592,620	-	-	-	-	-	-	6,592,620
Հանախորդներին տրված վարկեր	5,319,580	13,020,666	35,111,048	73,692,099	22,971,820	-	1,138,087	151,253,300
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	5,280,358	-	5,280,358
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	-	-	-	-	2,917,337	-	2,917,337
Գուդվիլ	362,602	-	-	-	-	-	-	362,602
Առգրավված ակտիվներ	-	-	-	-	-	1,884,816	-	1,884,816
Հետաձգված հարկային ակտիվ	-	-	-	-	-	192,189	-	192,189
Այլ ակտիվներ	1,224,792	-	-	-	-	1,565,123	-	2,789,915.00
Ընդամենը ակտիվներ	57,621,132	14,787,028	47,093,830	97,049,789	34,686,782	17,975,953	1,138,087	270,907,392
ՊԵՐՏՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Աձանցյալ ֆինանսական պարտավորություններ	397	-	-	-	-	-	-	397
Հանախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	54,614,789	848,882	3,542,578	65,684,628	75,898	-	-	124,766,775
Այլ փոխառու միջոցներ և ստորադաս պարտավորություններ	1,168,057	2,327,645	16,940,925	45,066,272	4,225,064	-	-	69,727,963
Թողարկված պարտքային արժեթղթեր	2,025,263	2,092,044	4,187,062	4,694,118.00	-	-	-	12,998,487
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	333,746	613,245	2,440,019	1,254,589	-	-	-	4,641,599
Հետզնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	12,008,019	-	-	-	-	-	-	12,008,019
Վարձակալության գծով պարտավորություններ	40,885	115,744	347,231	1,777,571	1,249,655	-	-	3,531,085
Ընթացիկ հարկային պարտավորություններ	-	-	234,752	-	-	-	-	234,752
Այլ պարտավորություններ	2,215,032	-	-	-	-	162,015.00	-	2,377,047
Ընդամենը պարտավորություններ	72,406,188	5,997,560	27,692,567	118,477,178	5,550,617	162,015	-	230,286,124
Զուտ դիրքը	(14,785,056)	8,789,468	19,401,263	(21,427,389)	29,136,165	17,813,938	1,138,087	40,621,268

* Ընդհանուր ժամկետանց վարկերի ժամկետանց մասը

Բացասական կարճաժամկետ իրացվելիության դիրքը կառավարելու համար Բանկն օգտագործում է ֆինանսական արժեթղթերը, որոնք կարող են վաճառվել կամ գրավադրվել հետզնման պայմանագրերի դիմաց և հիմնվում է այն ենթադրության վրա, որ ընթացիկ հաշիվներից ելքագրված գումարները և ժամկետային ավանդները կփոխարինվեն:

28 Կապիտալի կառավարում

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են ապահովել համապատասխանություն Բանկի կապիտալի համար գործող արտաքին պահանջներին և պահպանել բարձր պարտքային վարկանիշ ու կապիտալի լավ ցուցանիշներ՝ գործունեությանն աջակցելու և բաժնետիրական արժեքը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ տնտեսական պայմանների փոփոխությունների ու իր գործունեության ռիսկային բնույթին համապատասխան: Կապիտալը կառուցվածքը պահպանելու կամ դրա հետ կապված ճշգրտումներ կատարելու համար Բանկը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվելիք շահաբաժինների գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին կամ թողարկել արժեթղթեր: Կապիտալի կառավարման նպատակները, քաղաքականությունը և ընթացակարգերը որևէ կերպ չեն փոխվել նախորդ տարիների համեմատությամբ:

Բանկի կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից: ՀՀ ԿԲ-ի ներկայիս պահանջների համաձայն՝ բանկերի նվազագույն ընդհանուր կապիտալը պետք է կազմի 30,000,000 հազար դրամ (2021թ-ին՝ 30,000,000 հազար դրամ): 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի չափը համապատասխանում էր ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված նվազագույն կապիտալի պահանջներին:

Բանկը որպես կապիտալ սահմանում է օրենսդրությամբ վարկային կազմակերպությունների համար որպես կապիտալ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելյան համաձայնագրի սկզբունքների վրա, բանկերը պետք է ապահովեն, որպեսզի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը («կապիտալի համարժեքության ցուցանիշ») բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված նվազագույն մակարդակը կազմում էր 12%: 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում էր սահմանված ցուցանիշին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 1988թ. Բազելյան համաձայնագրի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի կառուցվածքի վերլուծությունը՝ հետագա փոփոխություններով, այդ թվում՝ շուկայական ռիսկերի ներառման հետ կապված փոփոխություններով, դեկտեմբեր ամսվա համար:

	2022թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված	2021թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված
1-ին դասի կապիտալ	43,454,083	37,087,874
2-րդ դասի կապիտալ	(1,276,309)	591,602
Ընդամենը կապիտալ	42,177,774	37,679,476
Ընդամենը ռիսկով կշռված ակտիվներ	281,185,160	254,638,774
Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցություն (ընդամենը կապիտալի հարաբերակցություն)	15.0%	14.8%

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկի կշիռների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային կողմի հետ կապված պարտքային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականը՝ հաշվի առնելով պահանջներին համապատասխանող ցանկացած գրավ կամ երաշխավորություն: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր կորուստների առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

29 Փոխատվության հանձնառություններ

Բանկն ունի վարկեր տրամադրելու հանձնառություններ: Այս հանձնառությունները նախատեսում են վարկային ռեսուրսների տրամադրում հաստատված վարկերի, վարկային քարտերի սահմանաչափերի և օվերդրաֆտների տեսքով:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ երրորդ անձանց հանդեպ հաճախորդների պարտավորությունների կատարումը երաշխավորելու համար: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև հինգ տարի:

Փոխատվության հանձնառությունների, ֆինանսական երաշխավորությունների և ակրեդիտիվների հետ կապված Բանկը կիրառում է պարտքային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք գործում են իրավաբանական և ֆիզիկական անձանց վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են փոխատվության հանձնառությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում փոխատվության հանձնառությունների գծով արտացոլված գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջությամբ տրամադրված են: Աղյուսակում երաշխավորությունների և ակրեդիտիվների գծով արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կճանաչվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չկատարեն իրենց պայմանագրային պարտականությունները:

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Պայմանագրային գումար		
Վարկային քարտերի գծով հանձնառություններ	5,560,326	6,040,963
Վարկերի և վարկային գծով հանձնառություններ	7,527,931	9,130,563
Երաշխավորություններ և ակրեդիտիվներ	4,903,576	2,321,757
	17,991,833	17,493,283
Արժեզրկման գծով պահուստ	(15,903)	(4,347)

Վերը ներկայացված ընդհանուր պայմանագրային փոխատվության հանձնառությունները պարտադիր չէ որ իրենցից ներկայացնեն դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս հանձնառությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել մինչև կատարվելը:

2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր ֆինանսական փոխատվության հանձնառությունները դասվել են 1-ին փուլ: Երաշխավորությունները և ակրեդիտիվները տրամադրվում են Բանկի կորպորատիվ վարկառուներին, որոնք չունեն ժամկետանց պարտավորություններ Բանկի նկատմամբ 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Վարկեր և վարկային գծեր տրամադրելու պարտավորության պայմանագրերը նախատեսում են պայմանագիրը միակողմանիորեն դադարեցնելու Բանկի իրավունքը՝ Բանկի համար անբարենպաստ պայմանների առկայության դեպքում:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է հանձնառությունների գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

հազ. դրամ	2022թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Հանձնառություններ				
Մնացորդը առ 1 հունվարի	4,347	-	-	4,347
Կորստի պահուստի գուտ վերաչափում	11,556	-	-	11,556
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	15,903	-	-	15,903

հազ. դրամ	2021թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Հանձնառություններ				
Մնացորդը առ 1 հունվարի	27,887	-	-	27,887
Կորստի պահուստի գուտ վերաչափում	(23,540)	-	-	(23,540)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	4,347	-	-	4,347

30 Պայմանական դեպքեր

(ա) Դատական վարույթներ

